ՀՈՒՆԻՍԻ 8-ԻՆ ԳՈՐԻՍԸ ԿՔՎԵԱՐԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՐԺԱՆԱՎՈՐ ԹԵԿՆԱԾՈՒ ՎԱՉԱԳԱՆ ԱԴՈՒՆՑԻ ՕԳՏԻՆ ®

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

ՀԱՍՑԵ՝ ք.ԿԱՊԱՆ, ՇԱՀՈՒՄՅԱՆ 20/32
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63
(091) 45 90 47
(077) 06 28 02

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱԷԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231: Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան,

Արշակունյաց 2: Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպաքանակը՝ 2300, գինը՝ 200 դրամ: Ստորագրված է տպագրության 30.05.2014թ.:

ՇԱԲԱԹ 31 ՄԱՅԻՍԻ 2014Թ • № 12 (320)

Սյունյաց երկիր

www.syuniacyerkir.am

Աղաչում էմ՝ չեղ, եղբայրք, մեր Տէր Յիսուս Քրիստոսի անունով, որ բոլորդ էլ նույն խոսքը ունենաք, եւ չեր մէջ երկպառակութիւններ չլինեն...

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼ

Խոսք ընտրողին

Սիրելի՛ հայրենակիցներ

Անշուշտ, ձեզանից շատերը կարող էին ղեկավարել Գորիս քաղաքը, բայց երկու հոգի է հավակնություն հայտնել՝ ընտրվելու Գորիսի քաղաքապետ, որոնց թվում եւ ես:

Անկեղծանալու, առերեսվելու այս ժամին ուզում եմ ամենայն պատասխանատվությամբ ասել՝ այո, ծառայությունս եմ առաջարկում ձեզ, քանզի իմ մեջ ուժ եւ կարողություն եմ տեսնում Գորիսն առաջիկա չորս տարում արժանապատվորեն ղեկավարելու համար, մանավանդ որ իմ քաղաքի, իմ համաքաղաքացիների հանդեպ միշտ էլ անկեղծ ու ազնիվ եմ եղել, մանավանդ որ բազմաթիվ ծրագրեր ունեմ Գորիսի առջեւ ծառացած հիմնախնդիրները լուծելու համար:

Գալիս եմ աշխատելու վճռականությամբ, գիտելիքներս ու տարիների աշխատանքային փորձս Գորիսին ծառայեցնելու մտադրությամբ:

Գալիս եմ Գորիսի բազմադարյան եւ հարուստ ավանդույթները պահպանելու ու լրացնելու տրամադրությամբ:

Գալիս եմ մեր բացթողումները շտկելու, մեր կյանքի արատավոր երեւույթների դեմ պայքարելու, համայնքին նետված մարտահրավերներին պատասխանելու համար:

Գալիս եմ վերականգնելու մեզանում ճաք տված քաղաքացիական համերաշխությունը, համախմբելու-մեկտեղելու բոլոր գորիսեցիների, հասարակական-քաղաքական ուժերի հնարավորությունները՝ հանուն Գորիսի:

Կլինեմ յուրաքանչյուրիդ ընկերն ու բարեկամը՝ ան կախ կուսակցական պատկանելությունից եւ քաղաքական կողմնորոշումից, ինչպես եղել եմ մինչեւ հիմա:

Ես գալիս եմ վերականգնելու Գորիսի քաղաքապետարանի վարկանիշը (որ երբեմն պատշաճ բարձրության վրա չի եղել), քաղաքապետարանը դարձնելու յուրաքանչյուրիդ հավատի եւ վստահության դուռը:

Գալիս եմ ամեն մի գորիսեցու մեջ ամրապնդելու ի սկզբանե եղած պատասխանատվության զգացումը, տիրոջ զգացումը մեր հայրենի բնօրրանի՝ Գորիսի հանդեպ:

Ես ջատագովն եմ ազատ, արդար, թափանցիկ ընտրությունների, Գորիսի քաղաքապետը պետք է ընտրված լինի գորիսեցիների կողմից:

Համագործակցության ձեռք եմ մեկնում բոլորիդ՝ հանուն Գորիսի արժանապատիվ ներկայի ու ապագայի:

Բայց եւ իմ մտադրություններն ու ծրագրերն իրականություն կդառնան, եթե ունենամ յուրաքանչյուրիդ քվեն ու զորակցությունը, ինչի համար ձեր վստահությունն եմ հայցում:

Սիրելի գորիսեցիներ

Ձեր վերաբերմունքը կարող եք արտահայտել հունիսի 8-ին՝ քվեարկելով իմ օգտին:

Երախտագիտությունս կհայտնեմ կոնկրետ գործերով եւ նվիրական աշխատանքով:

Հարգանքով՝

ՎԱՉԱԳԱՆ ԱԴՈՒՆՑ

ՀԱՄԱՐԻ ՆՅՈՒԹԵՐԸ ՏՐԱՄԱԴՐԵԼ Է ԳՈՐԻՍԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԹԵԿՆԱԾՈՒ ՎԱՉԱԳԱՆ ԱԴՈՒՆՑԻ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՇՏԱԲԸ

ՀՀԿ դիրքորոշում

ՎԱՉԱԳԱՆ ԱԴՈՒՆՑԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒ Է

ՍՈՒՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀՀԿ Սյունիքի մարզային խորհրդի նախագահ

Վաչագան Ադունցն, իսկապես, Գորիսի քաղաքապետի արժանավոր թեկնածու է: Այդպես ասելու համար նկատի ունեմ, նախեւառաջ, նրա աշխատանքային փորձն ու կազմակերպչական հմտությունները:
Եվ սրանք բառեր չեն սոսկ:
Մոտ յոթ տարի աշխատեց «Հայռուսգազարդ» ՓԲԸ-ի Գորիսի տեղամասի պետ: Եվ յոթ տարում նոր տեսք ու ծավալ ստացավ Գորիսի տարածաշրջանի գազամատակարարման պատկերը:
Հինգերորդ տարին է՝ աշխատում է «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ «Գորիս» տեղամասի պետ: Այդ ընթացքում Գորիս քաղաքն ապահովվեց շուրջօրյա ջրամատակարարմամբ, մի քանի գյուղում արմատապես բարելավվեց ջրամատակարարումը:
Նրա գործունեության շնորհիվ հիմնովին կարգավորվեց Գորիսի կոյուղու համակարգը: Հին, գրեթե շարքից դուրս եկած կոյուղու պատճառած տհաճությունները վաղուց չենք տեսնում մեր քաղաքում:
Նրա աշխատանքի ընթացքում Գորիսի ջրմուղկոյուղու համակարգում կատարվեց մոտ 2.5 մլն դոլարի ներդրում:
Վաչագան Ադունցն աչքի է ընկնում նաեւ ինտելեկտով, մարդկանց հետ հարաբերվելու բարձր կուլտուրայով, պատասխանատվության զգացումով, ինքնուրույն որոշումներ կայացնելու գործելակերպով:
Ոչ պակաս մի հանգամանք եւս. Վաչագան Ադունցը Գորիսի հանրության մեջ որոշակի հարգանք եւ հեղինակություն է վայելում, մարդիկ նրան հավատում են եւ նրանից կոնկրետ գործեր ակնկալում:
Հունիսի 8-ին քվեարկենք Վաչագան Ադունցի օգտին եւ յուրաքանչյուրս մեր հնարավորությունների չափով նպաստենք, որ մեր սիրելի Գորիսն էլ ավելի գեղեցկանա եւ ավելի քիչ հիմնախնդիրներ ունենա:

ՍԱՍՈՒՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀՀԿ Գորիսի տարածաշրջանային կազմակերպության խորհրդի նախագահ

Հայաստանի հանրապետական կուսակցության Սյունիքի մարզի Գորիսի տարածաշրջանային կազմակերպությունը Գորիսի քաղաքապետի ս.թ. հունիսի 8-ին կայանալիք ընտրություններում առաջադրել եւ պաշտպանում է Վաչագան Ադունցի թեկնածությունը: Որդեգրելով նման դիրքորոշում՝ մենք ոչ թե առաջնորդվել ենք անձնական հանգամանքներով ու մղումներով, այլ հաշվի ենք առել նրա անցած ճանապարհը, կուտակած փորձը եւ ընդհանրապես՝ մարդկային որակները:
Առաջադրված թեկնածուներից որեւէ մեկին բացասական բնութագրելու բարոյական իրավունք ու մտադրություն չենք վերապահում մեզ: Ավելին՝ գնահատում ենք երիտասարդ թեկնածուների ակտիվությունը, նրանց ձգտումներն ընդհանրապես, սերնդափոխությունը համարում բնականոն ճանապարհ:
Բայց, մեր կարծիքով, այս իրավիճակում ճիշտը Վաչագան Ադունցի թեկնածությունը պաշտպանելն է: Նա ծնվել, մեծացել է Գորիսում, ավելի քան քսան տարի աշխատել է տարբեր ոլորտներում, ղեկավարել տարբեր հիմնարկներ եւ միշտ իրեն դրսեւորել որպես հավասարակշիռ, բանիմաց, շրջահայաց մարդ: Ծանոթ է Գորիս քաղաքի առջեւ ծառացած խնդիրներին, ունի հստակ պատկերացումներ այդ խնդիրները լուծելու վերաբերյալ: Այնպես որ հավատում ենք, որ նա կարող է լուծում տալ այդ խնդիրներին, ի վիճակի է ավանդույթներով հարուստ Գորիսը ներկայացնել արժանապատվորեն:
Քվեարկենք Վաչագան Ադունցի օգտին:

Դասակներում են գործընկերները

ՋԻՎԱՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ

«Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ հարավային մասնաճյուղի տնօրեն

Վաղուց եմ ճանաչում Վաչագան Ադունցին, ով երկար տարիներ պաշտոններ է վարում Գորիսի շրջանում:
Ի սկզբանե նա ինձ վրա թողել է լուրջ, պատրաստված, օժտված, պատասխանատվության զգացում ունեցող անձնավորության տպավորություն:
Հենց այդ հանգամանքից ելնելով էլ 2009 թվականին նրան առաջարկեցի ստանձնել «Հայջրմուղկոյուղի» ՓԲ ընկերության «Գորիս» տեղամասի պետի պաշտոնը:
Անցած հինգ տարում դրական տպավորություններս ավելի խորացան եւ հիմնավորվեցին: Նրա ղեկավարության ընթացքում Գորիս քաղաքում եւ շրջակա գյուղերի մի մասում որակական նոր մակարդակի վրա դրվեց ջրամատակարարումը: Իրականացվեցին ծրագրեր, որոնք շրջադարձային նշանակություն ունեցան ջրամատակարարման ոլորտում: Արդյունքում՝ Գորիսում ունենք շուրջօրյա ջրամատակարարում, կատարվել են ջրաչափի տեղադրման աշխատանքներ, ճշգրտվել են պարտքերը:
Նշված ժամանակահատվածում Գորիսում կատարված ներդրումային աշխատանքների ծավալը հասավ 2.5 մլն դոլարի:
Վաչագան Ադունցի ուշադրության կենտրոնում է եղել քաղաքի կոյուղու ցանցի նորմալ գործունեության ապահովումը:
Բազմաթիվ պրոբլեմներ ունեցող այդ ոլորտում ոչ միայն ընթացիկ նորոգումներ են կատարվել: Կառուցվել է նաեւ մոտ 500մ երկարությամբ նոր կոյուղի:
Մոտ օրերս Գորիսում կմեկնարկի եւս մեկ ծրագիր՝ 650 հազար դոլար արժողությամբ:
Որոշակի աշխատանքներ կատարվեցին շրջանի գյուղերում: Մասնավորապես՝ փոխվել է Հալիձորի ներքին ցանցը՝ 4.5կմ երկարությամբ: Ուժի մեջ են Քարաշեն, Կորնիձոր գյուղերի ջրամատակարարման հետ կապված ծրագրերը:
Գործարար, կազմակերպչական հատկանիշներից զատ Վաչագան Ադունցն օժտված է մարդկային բարձր հատկանիշներով: Նա կարողանում է մարդկանց հետ ճիշտ հարաբերություններ կառուցել, կարողանում է կարեւորել ամեն մի մարդու դերը, արժանիքներն ու արժանապատվությունը, կարողանում է ստեղծել կոլեկտիվ՝ բառի բուն իմաստով, որի ամեն մի անդամ գիտի նվիրվել ընդհանուր գործին:
Եվ այդ ամենի արդյունքում, Վաչագան Ադունցի գործունեության շնորհիվ, «Հայջրմուղկոյուղին» ունի իր լավագույն տեղամասերից մեկն ամբողջ հանրապետությունում:
Գորիսը, գորիսեցին չեն սխալվի, եթե Վաչագան Ադունցի հնարավորություններն ավելի պատասխանատու ոլորտում օգտագործեն:

ԱՐԹՈՒՐ ԽԱՉԱՏՐՅԱՆ

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Սյունիքի գազիֆիկացման եւ գազամատակարարման մասնաճյուղի տնօրեն

2006թ. հունիսից «Հայռուսգազարդի» (ապա՝ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ) Սյունիքի ԳԳՄ-ի տնօրենն եմ: Այդ ժամանակ Վաչագան Ադունցն արդեն աշխատում էր մասնաճյուղի Գորիսի ծառայության պետ եւ համարվում էր համեմատաբար հին աշխատող: Մենք միասին աշխատեցինք մոտ երկու տարի:
Տպավորությունս միայն դրական է: Նրա ինժեներական միտքը, կազմակերպչական ունակություններն ակնհայտ էին: Բնակչության հետ շփումներում ակտիվ էր, հարգալից, կիրթ:
Նրա աշխատած տարիները Գորիսի գազամատակարարման եւ գազիֆիկացման համակարգում զարգացման ժամանակներ էին: Գորիս քաղաքում եւ մերձակա գյուղերում ամսական 60-70 բաժանորդ էր ավելանում: Եվ այդ ամենում իր ներդրումն ուներ Վաչագան Ադունցը:
Նրան հաջողվել էր ստեղծել նաեւ լավ կոլեկտիվ: Եվ այդ կոլեկտիվը, նաեւ նախկինում ստեղծված ավանդույթները կենսունակ գտնվեցին Վաչագան Ադունցի գնալուց հետո, ինչը նույնպես գնահատելի է:
Որպես կուսակիցներ նաեւ հետագայում ենք շփվել: Եվ նա այսօր իմ պատկերացումներում փորձառու մարդու, հմուտ կազմակերպչի ու կառավարչի, ենթակաների ու բնակչության հետ առնչություններում բարձր կուլտուրայի տեր անձնավորության ընկալում ունի:
Անշուշտ, Գորիսի ընտրողների խնդիրն է՝ ում ընտրել քաղաքապետ, բայց, Վաչագան Ադունցի ներուժը բավարար է՝ կատարելու ավելի պատասխանատու աշխատանք, քան կատարել է մինչեւ հիմա:

ԱՐԱՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀՀ բնապահպանության նախարարության ջրային ռեսուրսների կառավարման գործակալության հարավային ջրավազանային տարածքային կառավարման բաժնի պետ

Վաչագան Ադունցի հետ աշխատել եմ յոթ տարի՝ 1991-1998թթ.: Կենսաթոշակային հիմնադրամի Կապանի բաժնի պետն էի, իսկ նա՝ Գորիսի սոցապ բաժնի պետը: 1996 թվականից հետո կենսաթոշակային հիմնադրամը եւ սոցապ բաժինները միավորվեցին մեկ կառույցի մեջ եւ դար ձան սոցիալական ապահովագրության բաժիններ: Միաժամանակ ստեղծվեց այդ նույն կազմակերպության մարզային վարչություն, որի պետ նշանակվեցի, իսկ նա Գորիսի բաժնի պետն էր:
Վաչագան Ադունցի ամենակարեւոր հատկանիշներից մեկը ճշտապահությունն է, ինչպես նաեւ կազմակերպվածությունը:
Նրա մեջ գնահատում եմ այն, որ առանց վախենալու կարողանում է կշռադատված, ողջամիտ որոշումներ կայացնել: Չափից դուրս աշխատասեր է, մարդասեր եւ մարդամոտ: Դա հիմնականում արտահայտվում էր տարեցների հետ շփվելիս: Ամեն ինչ անում էր, որ թոշակները չուշանան՝ լավ իմանալով, որ բնակչության մի մեծ խավ թոշակի հույսին է: Համբերատար լսում էր դժգոհությունները: Առհասարակ նա լսելու կարողություն ունի, ինչը շատ կարեւոր է: Երկու ուղղությամբ էր զբաղվում՝ կենսաթոշակային հիմնադրամի գումարների հավաքում եւ կենսաթոշակների ու նպաստների նշանակում եւ վճարում:
Դրա համար մեծ պատասխանատվություն էր պետք: Ինքը հաջողությամբ էր կատարում այդ պարտականությունները:
Կոլեկտիվում լավ ղեկավարի համբավ ուներ: Կրճատումների ու վերակազմակերպումների ժամանակ պաշտպանում էր իր աշխատակիցների շահերը, ձգտում, որ որեւէ մեկն աշխատանքը չկորցնի:
1999 թվականից չենք աշխատում համատեղ, տարբեր ոլորտներում ենք, բայց դեռ շփվում ենք, ընտանիքներով այցելում միմյանց: Իմ երեխաների հետ մտերիմ հարաբերություններ ունի: Լավ ընկեր է, ուշադիր թե՛ ընկերների, թե՛ աշխատակիցների հանդեպ:

ԱՐԱՅԻԿ ՊԱՐՈՆՅԱՆ

ՀՀ սոցիալական ապահովության պետական ծառայության պետի տեղակալ

Վաչագան Ադունցին ճանաչում եմ 1998-ից, երբ աշխատում էր Գորիսի սոցիալական ապահովության բաժնի պետ: Այդ ժամանակ ես սոցիալական ապահովության հիմնադրամի Սյունիքի մարզային վարչության պետն էի, եւ աշխատում էինք միասին:
Վաչագան Ադունցը պաշտոնավարման ընթացքում իրեն դրսեւորել է որպես բանիմաց, պետական մտածելակերպով օժտված, ժողովրդի հոգսերով ապրող ղեկավար: Միշտ էլ վայելել է համակարգի աշխատողների եւ կոլեկտիվի անդամների սերն ու հարգանքը:
Օրինակելի եւ արդյունավետ աշխատանքի համար բազմիցս արժանացել է պատվոգրերի ու շնորհակալագրերի:
Վաչագան Ադունցի գիտելիքները, աշխատանքային փորձն ու կազմակերպչական ունակությունները թույլ կտան, որ նա էլ ավելի պատասխանատու աշխատանք կատարի մեր պետական համակարգում:

Գորիսի քաղաքապետի թեկնածու Վաչագան Ադունցի նախընտրական ծրագիրը

Գորիսը Հայաստանի Հանրապետության ամենահին եւ ազգային ավանդույթներով հարուստ քաղաքներից մեկն է:
Գորիսն արժանապատվորեն մասնակցեց հայոց անկախ պետականության վերականգնմանն ու Արցախյան գոյամարտին՝ հայրենիքի զոհասեղանին դնելով իր լավագույն զավակներից շատերին:
Գորիսն իր համեստ ներդրումն ունեցավ եւ շարունակում է ունենալ մեր նոր պետականության կերտման գործում:
Անկախության տարիներին, որքան էլ երկիրն ապրում էր անցումային շրջանին բնորոշ եւ միջազգային ու տարածաշրջանային իրողություններով պայմանավորված դժվարություններ, Գորիսում լուծում ստացան մի շարք օրախնդիր հարցեր սոցիալ-տնտեսական եւ հոգեւոր-մշակութային ոլորտներում:
Այդ բոլոր հանդերձ՝ Գորիսի ու գորիսեցու առջեւ շարունակում են ծառացած մնալ բազմաթիվ հիմնախնդիրներ, որոնց մի մասը գալիս է տասնամյակների խորքից, մի մասն էլ առաջ է եկել վերջին տարիներին: Դրանցից յուրաքանչյուրի լուծումը, անշուշտ, կարեւոր է ու անհրաժեշտ: Սակայն երկրի ներկայիս սոցիալ-տնտեսական իրավիճակում հնարավոր չէ դրանց բոլորի միաժամանակյա լուծումը: Ուստի եւ առանձնացնում ենք այն հարցերը, որոնց առաջնայնություն կտանք մեր աշխատանքում գալիք չորս տարում:

- Վեր հանել նախորդ տարիներին ՀՀ կառավարության՝ Գորիսին առնչվող բոլոր որոշումները, ուսումնասիրել դրանց կատարման ընթացքը եւ, անհրաժեշտության դեպքում, այդ մասին տեղեկացնել ՀՀ կառավարությանը՝ համապատասխան առաջարկություններով: Մասնավորապես հետամուտ լինել ՀՀ կառավարության 2011թ. հունիսի 10-ի N973-Ն որոշման կատարմանը, որում ձեւակերպված է Գորիսի զարգացման հայեցակարգը: Հետամուտ լինել նաեւ ՀՀ կառավարության 2009թ. հունիսի 26-ի որոշման կատարմանը, որ նախատեսում էր «Գորիս» քրեակատարողական հիմնարկի դուրս բերում քաղաքի տարածքից:
- Հետամուտ լինել, որ «Որոտանի հէկերի համալիր» ՓԲԸ-ի նոր կարգավիճակը (նկատի ունեմ համալիրի գույքը «Քոնթուր գլոբալ հիդրոկասկադ» ընկերությանը վաճառելը) փոփոխություններ չմտցնի առկա աշխատատեղերի պահպանման հարցում, ինչպես եւ ընկերության սոցիալական քաղաքականության մեջ՝ նկատի ունենալով, որ հէկերի համալիրը Գորիսի ամենախոշոր գործատուն է եւ Գորիսի սոցիալական կայունության ամենակենսունակ գրավականներից մեկը:
- Քաղաքապետարանի առավել գործունակ աշխատակազմի ձեւավորում՝ համալրված պրոֆեսիոնալներով, կառավարման ժամանակակից մեթոդներին տիրապետող, բարձրակարգ մասնագետներով, առաջադեմ աշխարհայացքով օժտված, որեւէ նախապաշարումով ու պայմանականություններով չկաշկանդված կադրերով:
- Բոլոր գորիսեցիներն ունեն մեկ գլխավոր շահ՝ Գորիսի ընդհանրական շահը: Եվ այդ ընդհանրական շահի շուրջ էլ Գորիսում համերաշխության, հանդուրժողականության, փոխադարձ հարգանքի մթնոլորտի ձեւավորում՝ ան կախ քաղաքական հայացքներից ու կուսակցական պատկանելությունից:
- Համայնքի բնակիչների շահերի պաշտպանություն, կատարվող աշխատանքների հրապարակայնություն ու թափանցիկություն, աջակցություն քաղաքացիական հասարակության հետագա ձեւավորմանը:
- Քաղաքապետի եւ քաղաքապետարանի հանդեպ համայնքի բնակիչների հավատի ու վստահության ամրապնդում: Հնարավորինս ակտիվացնել համայնքի բնակիչների մասնակցությունը տեղական ինքնակառավարման մարմիններին առնչվող հարցերի քննարկմանն ու լուծմանը: Համայնքին առնչվող առավել կարեւոր հարցերի շուրջ կազմակերպել հանրային քննարկումներ: Քաղաքացիների դիմումների հետ տարվող աշխատանքը համարել քաղաքապետարանի աշխատակազմի առաջնահերթ խնդիրներից մեկը:
- Ապահովել համայնքային բյուջեի հետագա աճ, եւ սեփական մուտքերի կատարումը հասցնել 100 տոկոսի: Համայնքային բյուջեի եկամտային մասի սեփական մուտքերի ծավալների աճն ապահովելու նպատակով ավելի արդյունավետ օգտագործել համայնքի հնարավորությունները: Քաղաքի հիմնախնդիրները լուծելու համար հայթայթել ֆինանսավորման հավելյալ աղբյուրներ:
- Սոցիալական արդարության ապահովումը՝ քաղաքապետարանի գործառույթների մեջ մտնող հարցերում, մշտապես պահել ուշադրության կենտրոնում:
- Հետամուտ լինել, որ Հյուսիս-հարավ ավտոմայրուղու կառուցման ազգային ծրագրի շրջանակում լուծվի նաեւ Գորիսը շրջանցող ավտոխճուղու կառուցման հարցը:
- Մշակել համայնքում իրականացվելիք երիտասարդական քաղաքականության հայեցակարգ, որի մեջ ներառել երիտասարդության ռազմահայրենասիրական ու ֆիզիկական դաստիարակության, զբաղվածության խնդրի կարգավորման, ազատ ժամանակի եւ հանգստի խելամիտ կազմակերպման, երիտասարդ ընտանիքների հիմնախնդիրների աստիճանական լուծումը, մոր եւ մանկան առողջության պահպանման ոլորտում բարենպաստ պայմանների ստեղծումը:
- Հետամուտ լինել զոհված ու վիրավոր ազատամարտիկների ընտանիքների սոցիալական պայմանների բարելավմանը, ուշադրության կենտրոնում պահել քաղաքում տեղակայված բանակային ստորաբաժանումների հոգսերը:
- Կրթական համակարգի (մանկապարտեզներ, երաժշտական եւ արվեստի դպրոցներ, միջին մասնագիտական եւ բուհական հաստատություններ) կազմակերպությունների հիմնախնդիրները պահել ուշադրության կենտրոնում, աջակցել դրանց գործունեության արդյունավետության բարձրացմանը:
- «Սյունիք-Զանգեզուր» հիմնադրամի օժանդակությամբ քաղաքի յոթ նախակրթական ուսումնական հաստատության մոտ 900 երեխայի վճարից ծնողներին ազատելու նախաձեռնությունը շարունակել 2015թ. հունվարի 1-ից հետո նաեւ՝ այդ գործում ընդգրկելով այլ կազմակերպություններ ու կարող անհատներ եւս (մեկ երեխայի համար ամսական վճարը 4000 դրամ է):
- Գործող օրենքի սահմաններում ուժեղացնել հսկողությունն իրավապահ մարմինների գործունեության հանդեպ: Հասարակական կարգի եւ առհասարակ իրավակարգի ամրապնդման նպատակով համագործակցել դրանում շահագրգիռ բոլոր կազմակերպությունների հետ:
- Սերտ համագործակցություն միջազգային կառույցների տեղական գրասենյակների հետ: Քույր քաղաքների հետ համագործակցությունը համարել քաղաքապետարանի գործունեության առաջնայնություններից մեկը:
- Քաղաքի ճարտարապետական դեմքի անաղարտ պահպանում, ազգային ավանդական նկարագրի հետագա խորացում: Համայնքի քաղաքաշինական ընթացքին հետեւելու, այն ուղղորդելու եւ կամայականություններն ու սուբյեկտիվ լուծումներն այդ ոլորտում բացառելու համար քաղաքապետին կից ստեղծել քաղաքաշինության եւ գեղարվեստի հարցերով խորհուրդ՝ քաղաքի, նաեւ հանրապետության ճանաչված մասնագետների մասնակցությամբ:
- Քաղաքապետարանի աշխատակազմում ստեղծել համապատասխան կառույց համայնքի տնտեսության, զբաղվածության եւ համայնքին առնչվող մյուս հարցերի վերաբերյալ վիճակագրությունը կենտրոնացնելու նպատակով՝ նկատի ունենալով, որ առանց ստույգ վիճակագրության հնարավոր չէ կազմել հիմնարար ծրագրեր քաղաքի զարգացման վերաբերյալ:
- Համայնքի հոգեւոր-մշակութային բազմադարյան ավանդույթների պահպանումն ու հարստացումը Գորիսի հետագա զարգացման երաշխիքներից է: Այդ նպատակով ամբողջապես վերանայել քաղաքի մշակութային համակարգի կառավարման մեխանիզմը՝ սկսած քաղաքապետարանի աշխատակազմից: Մշակույթի կենտրոնի, թատրոնի, թանգարանների, զբոսայգիների, պատկերասրահների, պատմամշակութային հուշարձանների պահպանության ծառայության գործունեության ներկայիս մակարդակը համարել ոչ բավարար եւ առաջադրել ոլորտի բարեփոխման ծրագրեր:
  Աջակցել քաղաքի ստեղծագործողներին:
  ՀՀ կառավարության օգնությամբ հստակեցնել Հին Գորիսի հանդեպ ՀՀ կառավարության օգնությամբ իրականացվող մշակութային քաղաքականությունը: Գլխավոր խնդիրն այդ առումով համարել տարածքի պատմամշակութային դիմագծի պահպանումը, թեեւ անդառնալի կորուստները նույնպես քիչ չեն այնտեղ:
  Հատուկ քաղաքականություն իրականացնել համայնքի տարածքում գտնվող եւ պատմամշակութային արժեք ներկայացնող շենք-շինությունների ու տարածքների պահպանման հանդեպ:
- 2015թ. լրանում է 20-րդ դարի 2-րդ կեսի հայ արձակի երեւելի ներկայացուցիչ Սերո Խանզադյանի, ինչպես եւ արձակագիր Սուրեն Այվազյանի 100-ամյակը: Այդ հոբելյանները հանրապետության մասշտաբով նշելու համար ձեռնարկել համապատասխան միջոցներ: Առհասարակ մեծագույն գորիսեցի Ակսել Բակունցի, ինչպես եւ Սերո Խանզադյանի, Գուսան Աշոտի, նաեւ Սուրբ Գրիգոր Տաթեւացու գրական, գիտական ժառանգությունը սերունդներին փոխանցելը, նրանց հիշատակի պատշաճ պահպանումը համարել քաղաքի կրթական եւ մշակութային օջախների խնդիրը:
- Համայնքի տնտեսություն մեջ իրական առաջընթացի ապահովումը համարել կարեւորագույն խնդիր:
  Փոքր եւ միջին բիզնեսի ոլորտում յուրաքանչյուր դրական նախաձեռնություն կխրախուսվի եւ կստանա համապատասխան աջակցություն:
  Կքաջալերվի ֆերմերային տնտեսությունը:
  Իբրեւ գլխավոր առաջնայնություն կհամարվի նոր աշխատատեղերի ստեղծումը:
  Տնտեսության ակտիվացման ռեալ ճանապարհ է տեղական հումքի ու տեղական հնարավորությունների արդյունավետ օգտագործումը:
  Խրախուսել ներդրումները, քաղաքում այդ նպատակով ստեղծել բարենպաստ ու գրավիչ պայմաններ:
- Հիմնարար փոփոխությունների եւ նոր մոտեցումների կարիք ունի Գորիսի բնապահպանական կացությունը: Անհրաժեշտ է մասնավորապես ուղիներ փնտրել Վարարակն գետի հունը հետագա աղտոտումից փրկելու եւ կառուցապատելու համար:
- Համապատասխան գերատեսչությունների քննարկման առարկա դարձնել համայնքի՝ ժամանակակից պահանջներին համապատասխան աղբավայրի կառուցման հարցը:
- «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի եւ հանրապետության համապատասխան գերատեսչությունների հետ քննարկման առարկա դարձնել քաղաքի կոյուղու վերակառուցման հարցը:
  Մշտական աղբահանություն իրականացնել քաղաքի ծայրամասերից եւս:
  Միջոցներ ձեռնարկել հեղեղատարների շահագործման եւ նորերի կառուցման ուղղությամբ:
  Ուշադրության կենտրոնում պահել քաղաքում եւ մերձակայքում գտնվող հանգստյան գոտիների մաքրումն ու պահպանումը:
- Ժամանակակից կառավարման ենթարկել բնակչության կոմունալ-կենցաղային սպասարկումների ոլորտը: Կարգավորել բազմաբնակարան շենքերի պահպանումն ու կառավարումը, որ ներկայումս անմխիթար վիճակում է:
  Պատշաճ տեսքի բերել քաղաքի մայթերը, բնակելի շենքերի բակերը, այդ շենքերի մուտքերը, ընդլայնել եւ բարեկարգել կանաչապատ տարածքները:
- Հնարավոր բոլոր միջոցներով նպաստել առողջապահական համակարգի գործունեության, բուժսպասարկման ոլորտի բարելավմանը:

Առաջարկվող հիմնադրույթները, բնականաբար, չեն կարող վերջնական ու ամբողջական համարվել: Նախընտրական քարոզարշավի, ընտրողների հետ հանդիպումների ընթացքում, անկասկած, կլինեն առաջարկություններ, դիտողություններ, դիտարկումներ, որոնց ոգով եւ կխմբագրենք մեր ծրագիրը: Հանգամանալից կքննարկենք քարոզարշավի ընթացքում մեր հասցեին հնչած ամեն մի քննադատական խոսք, դիտողություն եւ դրանք նույնպես հաշվի կառնենք: Մեր մտադրությունները, ի վերջո, կքննարկենք համայնքի ավագանու, ինչպես եւ փորձագետների հետ, որից հետո միայն դրանք կդառնան հիմք Գորիսի զարգացման քառամյա ծրագրի համար: Մինչ այդ ակնկալում ենք ստանալ նաեւ ընտրողների, հասարակական-քաղաքական ուժերի, հոգեւոր-մշակութային ոլորտի, գործարար աշխարհի, տնտեսվարող սուբյեկտների ներկայացուցիչների նկատառումները:

ՎԱՉԱԳԱՆ ԱԴՈՒՆՑ
Գորիսի քաղաքապետի թեկնածու

Զիսկական

Պետք է ճիշտ ապրես՝ զավակներիդ ճիշտ ապրելու բանաձեւը ցույց տալու համար

Տարեցն

Վաչագան Ադունց. ծնվել է 1967թ. հունվարի 1-ին Գորիս քաղաքում:
1973թ. ընդունվել եւ 1983թ. գերազանցությամբ ավարտել է Գորիսի N4 միջն. դպրոցը:
1983թ. ընդունվել եւ 1988թ. գերազանցությամբ ավարտել է հայկական գյուղատնտեսական ինստիտուտի «Ավտոմոբիլներ եւ ավտոմոբիլային տնտեսություն» բաժինը: Դպրոցում եւ բուհում ուսանելու տարիներին զբաղվել է հասարակական գործունեությամբ:
1988-1989թթ. աշխատել է Գորիսի շրջանային ագրոարդյունաբերական միավորումում՝ ավագ ինժեներ-տնտեսագետ,
1989-1993թթ. աշխատել է Գորիսի ԲՈՒԱՏՋ-ում՝ նորոգման արհեստանոցի վարիչ, պլանատնտեսագիտական բաժնի վարիչ,
1993-1994թթ.՝ Գորիսի քաղկոոպում՝ ապրանքագետ:
1994թ. ընտրվել է Գորիսի քաղխորհրդի գործկոմի սոցապ բաժնի վարիչի պաշտոնում, 1996թ. ոլորտի վերակազմավորումից հետո նշանակվել սոցիալական ապահովության Գորիսի տարածքային կենտրոնի տնօրեն, 1997թ. վերակազմավորումից հետո՝ սոցիալական ապահովագրության Գորիսի տարածքային կենտրոնի տնօրեն եւ այդ պաշտոնում աշխատել մինչեւ 2000թ.:
2000-2007թթ. աշխատել է «Հայռուսգազարդ» ՓԲԸ-ում՝ Գորիսի տեղամասի պետ, 2007 թվականին՝ «Ադունցներ» ՍՊԸ-ի տնօրեն:
2009թ. մինչեւ այժմ աշխատում է «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ում՝ Գորիսի տեղամասի պետ:
1996, 1999, 2002թթ. ընտրվել է Գորիսի ավագանու անդամ:
1997 թվականից ՀՀԿ ան դամ է:
Ամուսնացած է, ունի երկու որդի եւ մեկ դուստր:

Ծանիր Ձեզ

Ինքն իր մասին պատմելիս՝ մեր հարցուպատասխանի պարզ շրջապտույտում տեսանելի է դառնում, որ գիտակցաբար, թե ենթագիտակցորեն, հենց հույն իմաստունի այս պատգամին է հետեւել իր ողջ կյանքում 47-ամյա Վաչագան Ադունցը, մանրակրկիտ ու բոլոր մանրուքներում քննել-ուսումասիրել, ի վերջո, ճանաչել է ինքն իրեն ու գտել-հասկացել իր արարքների, բնավորության այս կամ այն հատկանիշի պատճառն ու ակունքը:

Համաքաղաքացիների՝ իրեն վստահելու եւ քաղաքի ղեկը չորս տարով իրեն փոխանցելու դեպքում պատրաստ ու կարող է զգում, համարում, որ ունի բավարար պատասխանատվության պաշար՝ նրանց հույսերն արդարացնելու համար. **«Չեմ սիրում առանց հաշվարկների պատահական քայլ անել, հետեւում եմ «յոթ չափիր, մեկ կտրիր» ասացվածքին եւ ապրել եմ այդ ձեւով: Թող վերամբարձ չհնչի, եթե պարտվեմ, կհամարեմ գորիսեցին է պարտվել, վստահ եմ իմ ժողովրդի սթափ գնահատականին: Այդուհանդերձ, շատ չեմ ընկճվի, կձգտեմ ուղղել սխալներս...»:**

Սրմատներ եւ մանկություն

Ծնվել ու մեծացել է Գորիսում: Ծնողները, որոնց մասին հպարտությամբ է պատմում, բնիկ գորիսեցիներն են՝ տեղի հայտնի գերդաստաններից. հայրը՝ Վանիկը, Ադունց տոհմից, մայրը՝ Լուսիկը՝ Յոլյաններից:

Հորը շուտ է կորցրել՝ 10 տարեկանում, դրա համար նրա մասին հիշողությունները սուղ են, եւ ավելի հասուն տարիքում, նրան ճանաչողներից պատմություններ ու կարծիքներ լսելով, առավել խորությամբ է ճանաչել ու գնահատել նրան. **«Գորիսում ճանաչված ատամնաբույժ էր, ժողովրդականություն վայելող մարդ, բոլորին ձեռք մեկնող ու մարդասեր»:**

Վաչագանին, որ տան կրտսեր զավակն էր, երկար սպասված որդի, եւ երեք քույրերին մայրն է խնամել ու մեծացրել, ինչպես ժողովուրդն է ասում՝ «հասցրել ամեն ինչի»:

Մանկությունն անցել է Գորիսի կենտրոնական թաղամասում, որն այդ ժամանակ «Ավանգարդ» սովխոզի տարածքում էր, այժմ էլ բնակվում է նույն՝ հայրական օջախում, որին որդիների հետ նորոգ տեսք է տվել:

Հաճախել է Գորիսի N 4 միջնակարգը, սովորել գերազանց: Դեռեւս դպրոցական, հետո ուսանողական տարիներից Վաչագան Ադունցի մեջ նշմարվել են առաջնորդի ու հմուտ կազմակերպչի հատկանիշները: Աչքի է ընկել ակտիվությամբ՝ ոչ միայն ուսման մեջ, այլեւ հասարակական գործունեությամբ, միջանձնային հարաբերություններում: Եղել է տարբեր առարկայական օլիմպիադաների հաղթող, ակտիվ պիոներ ու կոմերիտական, բազմաթիվ հանրապետական միջոցառումների մասնակից: Ժամանակ է գտել նաեւ արտադպրոցական կրթության համար, հաճախել կիթառի, ակորդեոնի խմբակներ, գերազանց ավարտել նկարչական դպրոցը: **«Քանի որ մեր տունը գտնվում էր Հին Գորիսի հարակից տարածքում, շատ եմ վազվզել քարանձավներում, բարձրացել Լաստ սարը: Հատկապես նկարչականում սովորելու տարիներին սիրում էի բնության գրկում նկարել, մեծ ոգեւորությամբ էի զբաղվում այդ արվեստով, ցավոք սրտի, չշարունակեցի, չնայած՝ նկարիչ-ուսուցիչներս խորհուրդ էին տալիս հենց այդ ուղղությունն ընտրել ուսումս շարունակելու համար: Երաժշտության դասերին էլ սիրով եմ գնացել, բայց շուտ եմ թողել»:**

Անկեղծանում է, որ ժամանակից շուտ հորից զրկվելն ու մոր հենարանը, ընտանիքի տղամարդը լինելու զգացողությունը ստիպել են ժամանակից շուտ հասունանալ, եւ ինքն այսօր իր զավակներին ձգտում է մանկություն ապրելու առավելագույն հնարավորությունը տալ: Ժամանակին ինքը փորձում էր մորն օգտակար լինել ինչով կարող էր, ու դեռ պատանեկան տարիքից այգի էր մշակում:

Ճիշտ ապրելու ուսուցիչները

«Ակնհայտ որեւէ մեկը չի եղել, որին ձգտեի նմանվել մանուկ ժամանակ, բայց հետագայում իմ կյանքում ունեցել եմ լավ խորհրդատու-բարեկամ, որն ինձ վերագտավ ուսանողական տարիներիս՝ լավ մարդ, հայտնի գորիսեցի, «Ավանգարդի» նախկին խմբագիր Գագիկ Հայրումյանն է: Ուսանողական տարիներիս, եթե գոնե շաբաթը մեկ ան գամ չհանդիպեինք, վրդովվում էր, ես էլ ամաչում էի: Եվ հպարտացել եմ այդ բարեկամությամբ...»:

Երախտագիտությամբ նշում է, որ իր կայացման մեջ մեծ դեր են ունեցել նաեւ իր բոլոր ուսուցիչները, որոնց հետ, դասերից զատ, նաեւ ջերմ մարդկային հարաբերություններ է ունեցել եւ ունի: Չի ցանկանում, անուններ տալով, առանձնացնել նրանց, պարտական է բոլորին: Միայն ցավով հիշատակում է հայոց լեզվի եւ գրականության ուսուցչուհի ընկեր Շահնազարյանին, ով զոհվեց հրետակոծությունից... (Միջանկյալ նշենք, որ Վ.Ադունցը նաեւ Գորիսի N 5 միջն. դպրոցի խորհրդի նախագահն է, ժամանակին էլ N 4 միջնակարգի խորհրդի անդամ է եղել):

Իսկ առհասարակ, քաղաքապետի թեկնածուի համար կարեւորագույն մարդը, որին կարծ է տեսել, բայց որն իր համար ճիշտ ապրելու չափանիշ է եղել, հայրն է. **«Ե թե հարկ է եղել որեւէ գորիսեցու ներկայանալ, չեմ նշել պաշտոնս, տվել եմ հորս անունը, հպարտությամբ ասելով, թե ում որդին եմ... Ու ձգտում եմ այնպես ապրել, որ հետո իմ զավակներն էլ ինձնով հպարտանան:**

Ձգտում եմ հետեւել հորս ամենակարեւոր խորհրդին՝ մարդասեր ու մարդկային լինել»:

Ուսանող Ադունցը

Չնայած դպրոցում բոլոր մանկավարժները խորհուրդ են տվել ուսումը բուհում շարունակել հենց իրենց առարկայի գծով, ընտրել է գյուղատնտեսական ինստիտուտի «Ավտոմոբիլներ եւ ավտոմոբիլային տնտեսություն» բաժինը, ավարտել կարմիր դիպլոմով: **«Ազգականներիցս մեկը շատ պատմեց այդ մասնագիտության մասին, այն ժամանակ շատ չվերլուծեցի, բայց չեմ փոշմանում, որ հենց այդ բաժինն ընտրեցի: Ճիշտ է, մասնագիտությամբ քիչ աշխատեցի...»:**

Բուհում ուսանելու տարիներին եւս հասարակական ակտիվություն է դրսեւորել, մասնակցել արհմիության, կոմերիտմիության աշխատանքներին, աչքի ընկնող ուսանողին ինստիտուտից զբոսաշրջային ուղեգրով Հունգարիա են ուղարկել: Մինչ օրս պահպանում է ընկերական կապը համակուրսեցիների հետ: Յուրովի առաջնորդ է դարձել նաեւ այդ տարիների գորիսեցի ուսանողների շրջանում. **«Եղել եմ գրեթե բոլոր գորիսեցի ուսանողների բնակարաններում, եղել եմ այսպես ասած «գորիսեցիների կենտրոնը»: Բացի դրանից, երեք անգամ երիտասարդական պալատում գորիսեցի ուսանողների անանխադեպ հավաք եմ կազմակերպել, առաջին անգամ 80, վերջին անգամ արդեն 170 ուսանող հավաքվեց, եւ դա՝ իմ պատասխանատվությամբ եւ առանց որեւէ միջադեպի»:**

Ցավով է նկատում, որ այսօր այդ 170-ից 10-20 մարդ է մնացել Գորիսում, եւ ինքն այս պաշտոնում ցանկանում է ընտրվել նաեւ արտագաղթի ներկա տխուր տեմպի առաջն առնելու համար. եթե չկարողանա էլ նրանց վերադարձնել, գոնե կանգնեցնի այս միտումը, եւ մեկնածներն էլ չխզեն կապը հայրենի Գորիսի հետ:

Աշխատանքը

Ավարտելուց հետո ասպիրանտուրայի քննություններ է հանձնել, ձեւակերպվել իբրեւ հայցորդ, սակայն մայրը մենակ էր, եւ ընտանեկան պայմաններից ելնելով՝ վերադարձել է Գորիս:

Ագրոաարդյունաբերական միավորումում ավագ ինժեներ-տնտեսագետ է աշխատել: Սակայն խիստ գրասենյակային աշխատանքը չի ձգել նրան, եւ տեղափոխվել է մասնագիտական աշխատանքի՝ Գորիսի ԲՈՒԱՏՋ: Ի դեպ, ինքնապաշտպանության տարիներին այնտեղ ոչ միայն ավտոմոբիլներ, այլեւ զինտեխնիկա են նորոգել:

Արդեն 20 տարի է՝ պարոն Ադունցը հիմնարկի ղեկավար է աշխատում. **«Աշխատել եմ տարբեր ոլորտներում, եւ ոչ մի տեղ ինձ չեն կարող մեղադրել բյուրոկրատական մոտեցման կամ կաշառակերության մեջ: Փորձել եմ հնարավորինս օգտակար լինել մարդկանց, միգուցե, հաճախ ճիշտ չեն ընկալել, երբ օրենքի տառը թույլ չի տվել այս կամ այն խնդրանքը կատարել: Ասեմ նաեւ, որ ոչ մի տեղ ղեկավարության կամ աշխատանքային կոլեկտիվի հետ խնդիր չեմ ունեցել: Տեղափոխվել եմ, որովհետեւ տեսել եմ, որ այլեւս բան չունեմ տալու տվյալ հիմնարկին կամ կոլեկտիվին, իսկ ես լճացում չեմ սիրում, անընդհատ փնտրող ու նորության ձգտող մարդ եմ»:**

Փաստում է, որ ղեկավարի իրական գնահատականը երեւում է, երբ այլեւս տվյալ պաշտոնում չի աշխատում, ու ինքը տպավորված է նախկին աշխատակիցների ու շահառուների ջերմ վերաբերմունքից:

Աշխատավայրերից յուրաքանչյուրն իր հետաքրքրությունն ու դժվարին կողմերն է ունեցել: Առաջին ղեկավարման փորձը ձեռք է բերել սոցիալական ոլորտում: Իսկ դրանք հայաստանյան իրականության մեջ դժվարին ու բարդ տարիներն էին: Գազի տեղամասն արդեն արտադրական ոլորտ էր, այդ ժամանակ սկսվեց Գորիսի եւ հարակից գյուղերի գազիֆիկացումը: Նշում է, որ քաղաքով քայլելիս հպարտություն է ապրում, երբ տեսնում է նրա՝ ամբողջությամբ գազիֆիկացված լինելը. դրանում ինքը ներդրում ունի: **«Եկավ մի պահ, երբ արդեն անելիք չունեի, ձեռնարկության աշխատանքները նորմալ հուն էին մտել: Փորձեցի գործարարությամբ զբաղվել, շինարարական ընկերություն հիմնեցի, բայց դա համընկավ միջազգային տնտեսական ճգնաժամին, ու շինարարության ծավալները նվազեցին: Վերադարձա նորից սպասարկման ոլորտ՝ «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ»:**

Թիմի ղեկավարը

Ղեկավարած հիմնարկներում աշխատակիցների հետ հարաբերություններում մի քանի սկզբունք է ունեցել: Նախ, ի սկզբանե հայտարարել է, որ չի հանդուրժում բամբասանքը. յուրաքանչյուր կոլեկտիվ մի ընտանիք է, եւ առկա հարցերը պիտի միասին քննարկեն: Չի հանդուրժել գլուխ պահողներին, չաշխատողներին, եղել է խիստ ու պահանջկոտ. **«Պատահել է՝ մարդիկ իրենք չեն դիմացել ռիթմին ու ազատման դիմում են գրել, բայց մինչ օրս բարեկամ ենք: Նոր աշխատատեղում երբեք հակված չեմ եղել կադրային ջարդի, փոփոխությունների: Ավելի լավ է եղած կադրերին համապատասխանեցնես քո տեմպին, քան փոփոխություններով խնդիրներ ստեղծես: Պահանջ եմ դրել նաեւ, որ յուրաքանչյուրը պիտի բավարարվի իր վաստակով, հայտարարել եմ, որ չեմ պատրաստվում աշխատողի փոխարեն աշխատել, այսինքն՝ յուրաքանչյուրն իր տեղում պիտի լինի: Վստահել եւ պահանջել եմ, ու գործերի բնականոն ընթացքը հաջողվել է ինձ: Նույնիսկ իմ արձակուրդ գնալն աշխատանքի որակի վրա չի ազդել»:** Իսկ աշխատանքից դուրս, իր բնորոշմամբ, բոլորի հետ եղել է հարազատի պես, յուրաքանչյուրի հոգսն իրենը համարել, նույնիսկ իր հասցեին լսել է՝ ծայրահեղությունների մարդ է՝ աշխատանքում՝ շատ խիստ, դրանից դուրս՝ անմիջական:

Քաղաքականություն

Տեղական ինքնակառավարման մարմինների աշխատանքը քաղաքապետի թեկնածուին առավել քան մոտիկից է ծանոթ: Երեք անգամ Գորիսի ավագանու անդամ է ընտրվել. առաջին անգամ 1996-ին, երբ ՀՀ-ում առաջին ՏԻՄ ընտրություններ էին, ավագանու ինստիտուտը նոր էր ձեւավորվում. **«Մեծ ոգեւորություն կար, լուրջ ծրագիր եւ նպատակ ունեինք: Ես ու ավագանու անդամ ընկերներս սրտանց ուզում էինք Գորիսում կայացնել այդ ինստիտուտը, ստեղծել էինք ժամանակավոր հանձնաժողովներ, ես անձամբ ավագանու կանոնադրություն էի մշակել, ուզում էինք քաղաքում ճիշտ դեմոկրատական կառավարման մոդել ստեղծել: Սակայն նկատեցի, որ դրա չկայանալը սուբյեկտիվ եւ օբյեկտիվ պատճառներ ուներ եւ չշարունակեցի մասնակցել ընտրություններին»:**

2003-ին Գորիսի քաղաքապետի համար թեկնածություն է առաջադրել, սակայն ՀՀԿ-ն, որին անդամակցում էր, պաշտպանել է այլ թեկնածուի, եւ ինքը ճիշտ չի համարել ընտրապայքարի մեջ մտնել կուսակցության առաջադրած թեկնածուի հետ:

Վաչագան Ադունցը ՀՀԿ-ին անդամակցել է 1997-ին, երբ Հանրապետականը դեռեւս իշխանական կուսակցություն չէր, ուստի արել է դա ոչ ինչ-ինչ հանգամանքներից ելնելով. **«Հանրապետական ընկերներ ունեի, ծանոթացել եմ կուսակցության հիմնական դրույթներին, ինքս էությամբ ավանդապաշտ եմ, դրա համար այն ինձ համար հարազատ կուսակցություն էր իր տեսլականով, գաղափարախոսությամբ: Եվ, բնականաբար, կուսակցական դառնալով ար դեն քաղաքականությունից դուրս չեմ եղել, տարբեր ընտրական գործընթացներում եմ ընդգրկվել»:**

Գորիսը

Հայրենի քաղաքի այսօրվա մեջ գորիսեցի Վաչագան Ադունցին ամենաշատը տխրեցնում է, երբ տեսնում է՝ ընկերները բացակայում են հանրապետությունից, եւ նրանց ծնողներն այստեղ մենակ են. **«Ամանորին այցելում եմ նրանց. սիրտս մղկտում է, երբ տեսնում եմ միայնակ նստած Նոր տարի են նշում, զավակները բացակա են...**

Տխրեցնում է եւ այն, որ երբեմնի Գորիսը՝ մշակույթի, գիտության ավանդական, հոգեւոր կենտրոնը, որը նաեւ բարձր մարդկային հարաբերությունների քաղաք էր, այսօր զիջում է դիրքերը: Անցում է կատարվում զուտ կենցաղային, փողային մակարդակի հարաբերությունների»:

Իսկ ուրախացնում է նկատվող ակտիվ երիտասարդական շարժումը, ոչ պասիվ երիտասարդների առկայությունը: Նրանց պահանջները լսելիս, հետները զրուցելիս՝ համոզվում է, որ կա Գորիսում սերունդ, որի վրա կարելի է հենվել: Եվ ընտրվելու դեպքում միանշանակ այդ ներուժը պիտի օգտագործի: Գովելի է իր համար եւ այն, որ երիտասարդությունն անտարբեր չէ ընտրությունների հանդեպ:

Ընտանիքը

Մեր հերոսը երկու որդի, մեկ դուստր ունի, որոնցով հպարտանում է՝ խելացի են, լավ են սովորում, ակտիվ են: Ավագ որդին՝ Վանիկը, կրում է պապի անունը եւ ընտրել է նաեւ նրա մասնագիտությունը. ավարտելով բժշկական համալսարանի ատամնաբուժական ֆակուլտետը՝ այժմ շարունակում է ուսումը: Ապագա իրավաբան կրտսեր որդին՝ Վահագնը, ծառայում է ՀՀ զինված ուժերում: Դուստր Լուսինեն դեռ դպրոցական է: Հայրը նկատում է, որ առավելապես Վահագնին են անցել ղեկավարի, նախաձեռնող ակտիվիստի իր հատկանիշները:

Զավակներին տված խրատ-խորհուրդների մեջ առանձնացնում եւ կարեւորում է մի քանիսը. **«Հորդորում եմ նրանց՝ երբեք չթերագնահատել դիմացինին, ասում եմ՝ մի՛ ստեք, ինչ-որ բան ձեռնարկելիս՝ կա՛մ մի սկսեք, կա՛մ լավ արեք, կիսատ բան մի՛ թողեք»:**

Պատմում է, որ երեխաների հետ զբաղվելու, նրանց դաստիարակելու համար միշտ ժամանակ է գտել: Համարում է, որ ամենահեշտ բանը կատարելն է, քան չկատարելուց հետո պատճառաբանություն փնտրելը. **«Շատ հայր ծնողներ այլեւայլ բաների համար ժամանակ են գտնում, թեկուզ ընկերական հավաքույթների, սակայն երեխաների դաստիարակության հարցում պատճառաբանում են, որ զբաղված են: Մինչդեռ ամեն ինչի համար էլ կարելի է ժամանակ գտնել, եթե ճիշտ տնօրինես այն, առավել եւս ընտանիքի համար՝ պարտավոր ես»:** Համոզված է, որ դաստիարակության մեջ ամենակարեւորը սեփական օրինակն է եւ դրա համար էլ ձգտում է ճիշտ ապրել՝ զավակներին ճիշտ ապրելու բանաձեւը ցույց տալու համար:

Ամուսնացել է 26 տարեկանում. մասնագիտությամբ հաշվապահ կնոջը՝ Վարդուհուն ծանոթ է եղել դեռ ուսանող ժամանակից, մտերիմ չեն եղել: **«Ավարտելուց հետո կրկին Գորիսում հանդիպեցի, մեր տան մոտ էր աշխատում, զգացի, որ սիրահարված եմ, հանդիպեցինք... Այսինքն՝ ընտանիք կազմելիս ինչ-որ խիստ չափանիշներ չեմ փնտրել, առաջնորդվել եմ զգացմունքներով, սրտի թելադրանքով»:**

Ընդունելով այսօրվա արժեհամակարգում քննարկվող կնոջ եւ տղամարդու իրավահավասարությունը՝ կնոջ մեջ առաջին հերթին գնահատում է համեստությունը (ոչ խեղճությունը), նվիրվածությունն ընտանիքին, իր երեխաների ապագայի համար ամեն ինչ զոհաբերելու ունակությունը (սա կարեւորում է նաեւ տղամարդու մեջ), տղամարդուն հասկանալու եւ ոգեւորելու ընդունակությունը:

«Մեր տունը հավաքատեղի է դարձել բոլոր ազգականների համար, դեռ փոքր ժամանակվանից հիշում եմ, որ մեր բարեկամների համար եղել է ամենաջերմ օջախներից մեկը, ու դա պարտավորեցրել է ինձ շարունակել ավանդույթները»: Իսկ տոներից ամենաշատը սիրում է Նոր տարին եւ մայիսյան տոները, որոնք գարնանային գեղեցկության զգացում եւ հաղթանակի բերկրանք են բերում:

Անկեղծանում է, որ ընտանիքը դեմ է եղել իր առաջադրվելուն. **«Գիտեն, որ կիսատ ոչինչ չեմ անում, ինչ-որ բան ձեռնարկելիս՝ դրան տրվում եմ լիարժեքորեն, չեն ուզում ինձ ավելորդ լարված ու հոգսաշատ տեսնել»:**

Մարդը

Քաղաքապետի թեկնածուն իրեն ներողամիտ մարդ է համարում եւ կողմ է քրիստոնեական արժեքներին. **«Անմիջապես ասում եմ դիմացինիս ինչ մտածում եմ, ու դա հետք չի թողնում իմ տրամադրության ու հոգեբանության մեջ, հեշտ եմ ներում: Չեմ կարծում, թե ամեն առիթով պիտի քինախնդիր լինել, թշնամանք զգալ, ամեն բացասական զգացմունք առաջինը քեզ վրա է ազդում: Իհարկե, բաներ կան՝ չի կարելի ներել, ես, համենայնդեպս, մինչ օրս չեմ առնչվել ինձ համար աններելի դեպքի»:** Հայտնում է, որ մարդկային բոլոր տիպի հարաբերություններում, ինչ-ինչ բարդությունների դեպքում, առաջին հերթին փորձում է ինքն իր մեջ փնտրել մեղքը:

Իր բնավորության մեջ «թերություն» է համարում պարզ ու անկեղծ լինելը, որն այսօր շատերի մտածելակերպով չի ընդունվում, այդուհանդերձ, վերջնական արդյունքում ինքն է հաղթող դուրս գալիս:

Վերջին երկու տարում տան վերանորոգումով զբաղված լինելու պատճառով չի հաջողվում, բայց մինչ այդ միշտ ընկերներով հավաքվել ու ֆուտբոլ են խաղացել՝ իրենք ու իրենց որդիները:

Տրամադրությունից կախված՝ սիրում է ամենատարբեր ոճերի երաժշտություն լսել՝ դասականից մինչեւ ազգային ու ռոք, պոպից մինչեւ ռաբիս:

Ցավով նշում է, որ համացանցը մարդուն այժմ կտրել է գեղարվեստական գրականությունից, որը միշտ ընթերցել է: Իսկ հիմա հազիվ օրվա լրատվությանն է հետեւում. **«Բայց անպայման պետք է վերադառնալ գեղարվեստական գրականությանը, որովհետեւ առանց դրա շատ ենք չորանում...»:**

Ուսանողական տարիներին սիրել ու զբաղվել է խոհանոցով, ասում է՝ պատրաստել է հայկական բոլոր ճաշատեսակները. **«Ավարտելուց հետո այդ հարցում ալարկոտ եմ դարձել...»:**

Սիրում է շփվել մեծահասակների հետ. **«Հատկապես սոցապում աշխատելու տարիներին շատ եմ առնչվել նրանց հետ, համբերատար լսում էի եւ լավ խորհուրդներ եմ ստացել, հետաքրքիր էր այդ շփումը»:**

Գալիս եմ, որ...

«Երբեք չէի ուզենա, որ իմ որդիները համարեն, թե իրենք Գորիսում ապագա չեն կառուցելու: Իսկ այսօր կա այդ վտանգը, երիտասարդությունը կարծում է, որ այստեղ իր կայանալու, իրեն դրսեւորելու համար հնարավորություններ չկան», – չի ուզում, որ գորիսեցին լուռ համակերպվի սրա հետ: Գորիսը, իր համոզմամբ ոչ միայն ֆիզիկապես, այլ հոգեպես, բարոյապես հզոր քաղաք է եղել, իսկ այսօր կամաց-կամաց գահավիժում է դեպի գավառային մտածելակերպ: Մինչդեռ ինքը, հպարտանալով իր Գորիսով, ցանկանում է, որ գորիսեցին ապրի արժանապատիվ կյանքով, լինի հզոր ու դարերով կուտակածը նորից վեր բարձրացնի:

«Ցավով եմ տեսնում, որ յուրաքանչյուր հարաբերության մեջ, լինի ընտանեկան, ընկերական, աշխատանքային թե քաղաքական, շատ ենք կենցաղին տուրք տալիս: Կուզենամ մի քիչ վեր բարձրանանք դրանից, գանք հոգեւոր արժեքների... Ով էլ ընտրվի, կխնդրեմ, կոչ կանեմ, որ Գորիսը դարձնենք այդպիսին: Վերջիվերջո, քաղաքի բնակչության զգալի մասը նաեւ ուսանողությունն է, գիտության ոլորտի մարդիկ են, ու դա լուրջ ուժ է: Ես մարդու գնահատման միջանկյալ փուլերն անցել եմ, տեսել եմ՝ ինչ կարող եմ անել, դրա համար եմ վստահ գալիս ընտրություններին: Բայց ինձ համար գերնպատակ է ոչ միայն այսօրվա կեցությունը, այլեւ մեր վաղվա սերնդի ապագան»:

ԱՐՄԻՆԵ ԱՎԱԳՅԱՆ

ՎԱՉԱԳԱՆ ԱԴՈՒՆՑ. «Կփորձեմ պահպանել արվածը, իհարկե, եղածին մի բան ավելացնելով»

– Պարոն Ադունց, եթե չեմ սխալվում, Դուք մի անգամ արդեն առաջադրվել էիք քաղաքապետի թեկնածու, բայց նպատակահարմար չէիք գտել շարունակել ընտրարշավը: Ինչո՞վ է պայմանավորված այս անգամվա առաջադրումը, Ձեր մեջ զգո՞ւմ եք այն ներուժը, որով կարող եք ղեկավարել Գորիսի քաղաքային իշխանությունը:

– Կանխավ շնորհակալություն հարցազրույցի համար: Ասեմ, որ նման հարց օրերս ինձ հաճախակի է տրվում: Դուք արդեն ծանոթացել եք իմ կենսագրությանը, շուրջ 25 տարի աշխատել եմ Գորիսի տարբեր հիմնարկ-ձեռնարկություններում, ամենեւին էլ վատ չեմ կատարել իմ պարտականությունները: Պարզապես ուզում եմ ծառայությունս առաջարկել իմ քաղաքին, իմ ծննդավայրին, իմ բնօրրան Գորիսին: Դա ինքնանպատակ առաջադրում չէ, թող անհամեստ չհնչի, իմ մեջ տեսնում եմ համապատասխան ուժ, կարողություններ, որ կարող եմ պատշաճորեն ղեկավարել Գորիսի քաղաքային իշխանությունը: Բացի այդ, ինչպես նշեցիք, տարիներ առաջ էլ եմ հավակնել Գորիսի քաղաքապետի պաշտոնին, 2003 թվականին, եւ պիտի ասեմ, որ ծանոթ եմ Գորիսի հիմնախնդիրներին, գորիսյան իրականության թույլ եւ ուժեղ կողմերին, տնտեսական, հասարակական ներուժին, եւ, կարծում եմ, այս իմացությունը թույլ կտա, որ գիտելիքներս, տարիների աշխատանքային փորձս ծառայեցնեմ իմ սիրելի քաղաքին, իմ ժողովրդին: Ընտրողները թող որոշեն՝ հարմա՞ր են գտնում, որ ես գլխավորեմ Գորիսի քաղաքային իշխանությունը, թե՞ ոչ:

– Ընտրապայքարում բացի ձեզանից եւս երեք հոգի հավակնում է Գորիսի քաղաքապետի աթոռին, որքանո՞վ եք տեղյակ նրանց արժանիքներին, ընտրվելու հնարավորություններին (հարցազրույցը կայացել է մայիսի 16-ին, երբ առաջադրվել էր չորս թեկնածու, ծանոթ. խմբ):

– Ես միշտ ասել եւ ասում եմ, որ Գորիսում շատ-շատերը կարող էին հավակնել Գորիսի քաղաքապետի պաշտոնին, շատ արժանավոր մարդիկ: Բայց, ինչպես տեսնում եք, միայն չորս հոգի է ցանկություն հայտնել մասնակցել ընտրապայքարին: Հարգում եմ նրանց ցանկությունը՝ ընտրվելու Գորիսի քաղաքապետ, բայց, կրկնում եմ, ընտրողն ինքը պիտի որոշի՝ ով է արժանի թեկնածուն: Ինչ վերաբերում է նրանց անձնական որակներին, ապա քանիցս հայտարարել եմ, որ նախընտրական քարոզչության ընթացքում, առհասարակ այս ընտրական գործընթացներում տրամադրված չեմ, առավել եւս նպատակ չունեմ նրանց վատաբանելու կամ հայհոյելու: Հարգում եմ նրանց մտադրությունը, նրանց գնահատելու իրավունքը պատկանում է Գորիսի ընտրողներին:

– Ոմանք հանրապետական մամուլում ցանկանում են անցյալ տարվա հունիսի 1-ի դեպքերը ծառայեցնել քաղաքական նպատակների համար:

– Ես առհասարակ բարոյական չեմ համարում որեւէ մեկի արարքը, եթե նա փորձում է անցյալ տարվա ողբերգական իրադարձությունը բերել եւ կապել ընտրությունների հետ: Մենք բոլորս ժամանակին արտահայտվել ենք, ափսոսում ենք կատարվածի համար եւ, բնականաբար, ճիշտ չէր լինի այդ ողբերգական իրադարձությունը կապել ընտրությունների հետ: Ընդհակառակը, ընտրությունները լավագույն հնարավորություն են առաջ նայելու համար: Իսկ, ովքեր, այնուամենայնիվ, այդ ցավալի դեպքը փորձում են կապել այս ընտրությունների հետ, եւ թող ներվի ասել, դրանից էլ օգուտ քաղել, բարոյական չէ: Նորից եմ կրկնում, մեկ տարի առաջ տեղի ունեցածը Գորիսի քաղաքապետի ընտրությունների հետ ոչ մի առնչություն չունի:

– Շատերն են շահարկում այն հանգամանքը, որ ձեր թեկնածությունը պաշտպանում են ոչ միայն Սուրեն Խաչատրյանը, այլեւ Սյունիքի մարզի ՀՀԿ տարածքային կազմակերպությունը: Դարձյալ մամուլում ձեւակերպումներ կան, թե այս թեկնածուն նախկին մարզպետի մարդն է, մյուսը՝ ներկա մարզպետի:

– Նախ՝ շնորհակալ եմ Հայաստանի հանրապետական կուսակցությանն իմ թեկնածությունն առաջադրելու համար, այդ առումով ես թեկնածուներից միակն եմ, որին քաղաքական ուժ է առաջադրել, մյուս երեք թեկնածուներն ինքնառաջադրվել են, այսինքն՝ Հանրապետական կուսակցությունը կարող է պարզաբանում տալ, թե ինչու իմ թեկնածությունն առաջադրեց: Ինչ վերաբերում է հարցի երկրորդ հատվածին, եթե ոմանք տեղին են համարում այդպիսի ձեւակերպում օգտագործել՝ «Սուրեն Խաչատրյանի մարդ», ապա թույլ տվեք ես էլ պատասխանեմ նույն տրամաբանությամբ. այսօր առաջադրված բոլոր թեկնածուները Սուրեն Խաչատրյանի մարդիկ են ի սկզբանե: Մյուս թեկնածուների ծնողներն ու հարազատներն էլ երկար տարիներ համագործակցել են Սուրեն Խաչատրյանի հետ: Նրանց համար մեծագույն պատիվ է եղել Սուրեն Խաչատրյանի հետ համագործակցությունը: Եվ այսօր չի կարելի կեցվածք ընդունել, թե իրենք չեն կիսել Սուրեն Խաչատրյանի հայացքները: Ի վերջո չի կարելի մոռանալ, որ նա մեծ ներդրում ունի եւ՛ Գորիսի պաշտպանության կազմակերպման, նկատի ունեմ Արցախյան պատերազմը, եւ՛ Գորիսի սոցիալ-տնտեսական զարգացման գործում: Այսօր էլ նա Գորիսում մի քանի սոցիալ-տնտեսական ու մշակութային ծրագրեր է իրականացնում: Գորիսում քսան տարուց ավելի ղեկավար պաշտոններ եմ զբաղեցրել, եւ Սուրեն Խաչատրյանի հետ առնչվել եմ այնքանով, որքանով առնչվել է յուրաքանչյուր հիմնարկ-ձեռնարկության ղեկավար:

Միաժամանակ հայտնեմ՝ որպես քաղաքապետի թեկնածու առաջադրվելու համաձայնություն տալուց առաջ հանդիպել եմ Սյունիքի մարզպետ Վահե Հակոբյանի հետ, ով հաստատել է փաստը, որ Հանրապետական կուսակցությունը քաղաքական որոշում է կայացրել պաշտպանելու իմ թեկնածությունը: Մարզպետը նաեւ հայտնեց, որ Գորիսի իշխանության ղեկավարը պիտի տիրապետի քաղաքային տնտեսության ողջ համակարգի կառավարմանը, որ ինքը հաճույքով կաշխատի նման քաղաքապետի հետ: Այս ամենը ոչ միայն պարտավորեցնում է, այլ հույս է ներշնչում, որ ընտրվելու դեպքում մեր համատեղ աշխատանքում կհաստատվեն կառուցողական հարաբերություններ:

– Ներկայացրեք, խնդրեմ, Գորիսի ներքաղաքական վիճակը: Հանրապետական լրատվամիջոցներում կարծիքներ են շրջանառվում, թե իբր Գորիսում լարվածություն է:

– Ես տրամագծորեն այլ կարծիք կհայտնեմ. հանրապետության ամենահամերաշխ, ամենահանգիստ բնակավայրերից մեկն է: Գորիսն այն բացառիկ քաղաքներից մեկն է, որտեղ մարդիկ իրար ճանաչում են, ինչպես ասում են՝ մինչեւ յոթ պորտը: Նման քաղաքում չի կարող խոր ատելություն լինել միմյանց հանդեպ: Բնականաբար, որոշ տարաձայնություններ կլինեն, առօրյա խնդիրներում ինչ-ինչ հակասություններ, բայց այնպես, ինչպես ոմանք փորձում են ներկայացնել, Գորիսի իրականության հետ ոչ մի կապ չունի: Վերջերս ընտրությունների հետ կապված ինձ նման հարցեր են ուղղել, եւ ես կրկնել եմ հայտնի խոսքը՝ ավելի լավ է մեկ անգամ տեսնել, քան տասը անգամ լսել:

– Այնպիսի մի տպավորություն կա, որ ասես քաղաքային իշխանության խոսքը չի հասնում բնակչությանը: Կարծես անջրպետ կա քաղաքապետարանի եւ բնակչության միջեւ: Ընտրվելու դեպքում հնարավո՞ր է, որ հանրային խորհրդի նման մի բան ստեղծեք եւ մարդկանց հետ շփվելու այլ ձեւեր գտնեք:

– Հանգամանքների բերումով այնպիսի պաշտոններ եմ զբաղեցրել, որ մեծ են եղել անմիջական կապն ու շփումը բնակչության հետ, ընդունելության առանձին ժամեր չէի սահմանել, յուրաքանչյուր ժամս ու րոպես օգտագործել եմ բնակչության հոգսերը լսելու ու խնդիրները լուծելու նպատակով: Նույն աշխատաոճն եմ ընտրել՝ լինելով համայնքի ավագանու անդամ: Երեք անգամ ընտրվել եմ Գորիսի ավագանու անդամ, առաջին անգամ ընտրվելուց հետո ավագանու հենց առաջին նիստի ժամանակ ինքս առաջարկել եմ ավագանու կանոնադրություն, որ ներառում էր մշտական գործող հանձնաժողովներ ստեղծելու կետ, որոնցով պիտի հնարավոր լիներ ապահովել հասարակական քննարկումների մթնոլորտ: Չգիտեմ իմ՝ ավագանու անդամ չլինելու ժամանակ դրանք ինչ արդյունավետությամբ գործեցին հետագայում: Բայց միանշանակ կարող եմ ասել, որ քաղաքապետարանը կարող է իր պարտականությունները լիարժեքորեն կատարել՝ միմիայն հենվելով հասարակական կարծիքի վրա: Առանց հասարակության տեսակետը հաշվի առնելու՝ հնարավոր չէ քաղաքային տնտեսության կառավարման ոլորտում արդյունավետ աշխատել:

– Կարելի է փաստել, որ հանրապետությունով մեկ ավագանու ինստիտուտը չի կայացել, ինչպե՞ս եք պատկերացնում ավագանու հետագա գործունեությունը: Որքան էլ լուրջ ծրագրեր ունենաք, դրանք կմնան թղթի վրա, եթե ավագանին կայացած չլինի: Ակնկալում ենք ձեր հիմնավոր տեսակետը, մանավանդ որ երեք անգամ եղել եք ավագանու անդամ: Նաեւ գաղտնիք չէ, որ ավագանու մեջ թափանցում են մարդիկ շահադիտական նպատակներով, որեւէ բան փախցնելու համար՝ առանց որեւէ բան տալու համայնքին: Ասածս ոչ միայն Գորիսին է վերաբերում:

– Սկսեմ հարցի վերջից, իմ պապերը, ծնողներս բնիկ գորիսեցիներ են, ապրել են այստեղ, իմ կենսագրությանն արդեն ծանոթ եք, բայց տարիներ ի վեր բնակվելով այստեղ, նույնիսկ մի հողամաս չունեմ: Երեք անգամ ավագանու անդամ լինելով՝ ոչ մի ակնկալիք չեմ ունեցել, բացի քաղաքիս ծառայելուց: Երկրորդ՝ որ ավագանու ինստիտուտը չի կայանում, դա շատ ցավալի է, նաեւ կարծում եմ, որ միշտ ընդհանրական շահը պիտի ավելի բարձր լինի, քան նեղ անձնականը, երրորդ՝ ավագանու անդամները եւ քաղաքապետը չպիտի լինեն բարիկադի տարբեր կողմերում:

– Մեր հասարակությունն ավելի քան քաղաքականացված է, կան քաղաքական տարբեր բեւեռներ, երբեմն գլուխ է բարձրացնում անհանդուրժողականությունը: Ինչպե՞ս եք պատկերացնում քաղաքացիական համերաշխության մթնոլորտի ստեղծումը:

– Գիտեք, այսօր երիտասարդության մի մասի կողմից կոչեր են հնչում՝ «Քաղաքը բոլորինս է» : Ասեմ՝ կոչը՝ կոչ, յուրաքանչյուր ոք իր էությամբ, իր կատարած գործերով պիտի ապացուցի այդ կոչի իսկությունը: Երբ մի խումբ հայտարարում է՝ մենք որոշ մարդկանց վտարելու ենք Գորիսից, մենք այս ենք անելու, այն ենք անելու, դա ինքնին չի խոսում այն մասին, որ քաղաքը բոլորինս է, այլ այն, որ իրենք իրենց կոչերին հակառակ գործունեություն են ծավալում: Հաստատապես ասում եմ, որ ես ապահովելու եմ այդ՝ «Քաղաքը բոլորինս է» կոչին համապատասխան մթնոլորտը: Իմ գործերով դա ապացուցելու եմ: Կյանքում երբեւէ կոնֆլիկտային իրավիճակներում չեմ եղել, այսօրվա իմ մրցակիցների հետ ժամանակին լավ հարաբերություններ եմ ունեցել: Ինքս լինելու եմ այն քաղաքապետը, ով Գորիսին բերելու է համերաշխություն: Եվ յուրաքանչյուրը գնահատվելու է իր արժանիքներին համապատասխան, իր կարողությունները դրսեւորելու հնարավորություն է ստանալու:

– Ընտրվելու դեպքում ո՞րն է լինելու ձեր առաջին քայլը (քայլերը):

– Նախ՝ կծանոթանամ կառավարության վերջին տարիների որոշումներին, որոնք առնչվում են Գորիսին: Այնուհետեւ՝ կփորձեմ քաղաքապետարանի աշխատակազմը գործնական բարձր մակարդակի հասցնել: Միանշանակ

կադրային ջարդ չի լինելու, բայց նաեւ աշխատակիցները պիտի համապատասխանեն մեր պատկերացրած չափանիշներին: Երկրորդ՝ ձգտելու եմ պաշտոնավարման հենց առաջին պահից կարգավորել հարաբերությունները համայնքի ավագանու հետ, նաեւ միասին կորոշենք մեր հետագա անելիքները: Երրորդ՝ ձեր նշած հասարակական համերաշխ մթնոլորտը ստեղծելու նպատակով պիտի տարբեր մասնագիտական խորհուրդներ ստեղծել (մշակույթի, տնտեսության, եւ այլն), որ Գորիսի կառավարման գործում ընդգրկվեն վաստակ ունեցող անձինք, երիտասարդ կարող ուժերը: Նախեւառաջ ձգտելու եմ այդ մարդկանց համախմբել մի տանիքի տակ: Եվ ասեմ՝ բացի բնակչության եւ քաղաքապետարանի կապը սերտացնելուց, նաեւ, կարծում եմ, որ լուրջ, գործնական կապեր պիտի հաստատվեն արտերկրում ապրող գորիսեցիների հետ: Դեռեւս ուսանողական տարիներին Երեւանում ինքս նախաձեռնել եւ կազմակերպել եմ գորիսեցի ուսանողների հավաքներ, եւ վերջին հավաքին մասնակցել է մոտ 170 ուսանող: Նրանց գերակշիռ մասն այսօր Հայաստանից դուրս է գտնվում: Մենք այնպիսի դաշտ պիտի ստեղծենք, որ մարդիկ ոգեւորությամբ ներդրումներ անեն Գորիսում: Նաեւ պիտի ավելի սերտացնենք գործնական կապերը Գորիսի քույր քաղաք Վիեհի հետ:

Գորիսը մաքուր քաղաքի համբավ է ունեցել առաջներում, բայց հիմա բացթողումներ ունենք: Մանավանդ բնապահպանական լուրջ խնդիրներ են ծառացել համայնքի առջեւ: Վարարակն գետի հունը մի հսկա հակասանիտարական օջախ է դարձել, կոյուղաջրերը թափվում են ուղղակի գետի մեջ, ինչպես նաեւ կենցաղային աղբը: Համընդհանուր մտահոգություն պիտի դարձնենք այս խնդիրը, որովհետեւ համալիր լուծում է պահանջում: Կարեւորում եմ նաեւ բազմաբնակարան շենքերի բնակֆոնդի պահպանությունը, որովհետեւ առկա ֆինանսական միջոցներով բնակելիներ կառուցելը, ինչպես ասում են, ֆանտաստիկայի ոլորտից է: Իսկ եղածը չպահպանելն արդեն իսկ հանցագործություն է:

– Հանրապետությունում կա մի քանի քաղաք (Գյումրի, Դիլիջան, Գորիս), որոնք առանձնանում են իրենց ճարտարապետական կոլորիտով: Բայց, կարծես, Գորիսի ճարտարապետությանն էլ է մարտահրավեր նետված:

– Միշտ հպարտացել եմ Գորիսի ճարտարապետությամբ: Որտեղ եղել եմ, այն միտքն եմ հայտնել, որ Գորիսի ոչ մի կառույց՝ առանձնատուն, մյուսին չի կրկնում, յուրաքանչյուրը կառուցված է յուրովի: Յուրաքանչյուր առանձնատուն մի արվեստի գործ է: Պիտի ձգտենք այդ ուրույն ոճը պահպանել: Իմ հայրական տունը հիմքից վերակառուցել եմ, բայց ճակատային մասը պահպանել եմ իր նախաստեղծ տեսքով: Որովհետեւ մեր քաղաքի ճարտարապետական տեսքի խաթարման յուրաքանչյուր փորձ հանցագործություն կարելի է համարել: Գուցե խիստ է ասված, բայց այդ համոզմանն եմ: Դա սրբություն է, որին չի կարելի ձեռք տալ: Այս մտայնությունը պիտի ունենան բոլոր գորիսեցիները: Քաղաքաշինական ճարտարապետությունը շատ նուրբ ոլորտ է: Այն համոզմունքն ունեմ, որ կարելի է քաղաքապետարանին կից ստեղծել մի մասնագիտական՝ գեղարվեստի հարցերով զբաղվող խորհուրդ, որի մեջ կարելի է ընդգրկել այդ ոլորտի գիտակ մասնագետների, ծագած հիմնախնդիրներին համատեղ լուծում տալու համար: Քանզի այն, ինչ հիմա կորցնում ենք, հետո դժվար է լինելու վերականգնել, եթե ոչ՝ անհնար: Ես արդեն նշեցի քաղաքի կառավարման գործում հասարակական խորհուրդների դերի մասին: Յուրաքանչյուր մարդ կարող է սխալվել, բայց չեմ կարծում, որ խորհուրդն էական սխալ գործի:

– Գորիսը նաեւ հանրապետության այն քաղաքներից է, որ թատրոն է ունեցել, նույնիսկ հպարտանում եք Գորիս գյուղի քարանձավային թատրոնով: Ժամանակին ունեցել եք ժողգործիքների անսամբլ, ժողովրդական թատրոն, շատ լավ երգչախումբ, եւ առհասարակ մշակութային կյանքի զարկերակը տասնամյակներ ի վեր Գորիսում փոքրիշատե համաչափ է բաբախել: Բայց այսօր մշակութային կյանքը շատ իներտ է: Կարծում եմ, որ ընտրվելու դեպքում մեծ տեղ պիտի տաք մշակութային կյանքին, եւ Գորիսի մշակույթը սպասում է մի լուրջ բարենորոգման:

– Ասվածին ավելացնեմ, որ ոչ միայն Գորիսում, այլ հանրապետությունում վերջին ժամանակներս մշակութային կյանքը հետընթաց է ապրել: Մեր ազգային արվեստների եւ արհեստների մեջ բաներ կան, որոնք կորցնում ենք, մասնավորապես որոշ ժողովրդական նվագարաններ՝ թառը, քամանչան, ուդը: Կարծես, մշակութային ոլորտում արժեքային համակարգի փոփոխություն է տեղի ունենում՝ իհարկե դեպի վատը: Ասեմ, որ պրոբլեմը միայն Գորիսում չէ, այլ ողջ հանրապետությունում: Մենք մշակութային սով ենք ապրում: Ցածր արժեքները գլուխ են բարձրացնում՝ ի հաշիվ լուրջ արժեքների, դարերով ստեղծված ավանդույթների: Միջակությունը համատարած գրոհի է անցել: Մեր ազգային ժողովրդական մեղեդիները կամաց-կամաց իրենց տեղը զիջում են արեւելյան մուղամներին:

– Ընտրություններին առնչվող մի հասկացություն կա՝ ընտրազանգված: Ո՞րն է ձեր ընտրազանգվածը, դրա մեջ բնակչության ո՞ր շերտերն են ավելի գերակշռում:

– Յուրաքանչյուր ավագանու ընտրությունից հետո, որին մասնակցել եմ, այսպիսի մի միտք եմ հայտնել. «Ամենաշատը շնորհակալ եմ այն ընտրողից, ով քվեարկել է իմ օգտին, բայց ում ես չեմ ճանաչում»: Ընտրարշավի շրջանակում ջանացել եմ ավելի շատ շփվել բնակչության հետ, խտրություն չեմ դրել, թե ինձ հետ ով է առնչվում: Եվ երբ հետաքրքրվում են, թե ումից ես քվե ակնկալում, պատասխանում եմ՝ բոլորից միանշանակ: Յուրաքանչյուր ընտրող ինձ համար հոգեհարազատ է: Կարծում եմ՝ իմ օգտին քվեարկելու են մարդիկ, որոնց ես հականե-հանվանե չգիտեմ:

– Գորիսը կրթական-մշակութային կենտրոն է եղել եւ կա այդպիսին, բնականաբար, հոգեւոր-մշակութային եւ կրթական ավանդույթները պահպանելու լուրջ խնդիր կա:

– Վաղ տարիքից եմ հիշում՝ Գորիսում գեղեցիկ մթնոլորտ էր ձեւավորվել: Պարահրապարակ կար, որ երեկոյան բնակիչներին ձգում էր դեպի իրեն, Գորիսում կային հետաքրքիր ավանդույթներ, հարեւաններով շփվելու ուշագրավ կուլտուրա կար, մարզամշակութային միջոցառումներ էին անցկացվում: Ցավոք, այսօր ամենից շատ կենցաղային մտածելակերպն է գերիշխում, ավելի հաճախ հացիվն է գերիշխում, քան բանիվը, ինչի հետեւանքով հայտնվել ենք նման փակուղային վիճակում: Նաեւ այն էլ եմ ընդունում, որ երբ մարդ կուշտ չէ, նրանից դժվար է հոգեւոր արժեքներ պահանջել: Բայց, միաժամանակ, մարդկանց կենսամակարդակը բարելավելուն զուգընթաց պիտի ընդլայնենք մշակութային դաշտը, մաքրենք այն աղբից, նոր միայն զարգացնենք հոգեւոր-մշակութային ավանդույթները: Մենք ունենք հզոր ռեսուրս՝ մեր ուսանողությունը, որ հակված է նոր փոփոխությունների: Այդ ռեսուրսը պիտի ճիշտ ուղղությամբ տանենք: Ոչ թե քանդելու ուղղությամբ, այլ կառուցելու:

– Նելսոն Ոսկանյանը հրաժեշտ է տալիս իր աթոռին, մարդ, ով 14 տարի ղեկավարել է Գորիսի քաղաքային իշխանությունը:

– Արժանին պետք է մատուցել Նելսոն Ոսկանյանին, բարդ ժամանակաշրջանում է պաշտոնավարել: Նրա ղեկավարման օրոք Գորիսում քիչ բան չի արվել: Եղել են նաեւ չիրագործված ծրագրեր: Կձգտենք պահպանել արվածը՝ եղածին մի բան ավելացնելով: Միաժամանակ հույս ունեմ, որ պարոն Ոսկանյանը քաղաքապետի կարիերան ավարտելուց հետո կշարունակի աջակցությունը քաղաքապետարանին, հոգատարությունը քաղաքի նկատմամբ, նաեւ կլինի մեր լավ գործընկերը, բարի խորհրդատուն:

Հարցազրույցը՝
ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆԻ

Գորիսը բոլորիս ուրախությունն է, կարոտը, հոգսը, ցավը...

Առաջարկը՝ կարծիք գրել Գորիսի քաղաքապետի թեկնածուի մասին, անսպասելի էր, բայց հաճելի ու պարտավորեցնող:

ԳԱԳԻԿ ՀԱՅՐՈՒՄՅԱՆ

Մոսկվա

Այս պարագայում ինձ համար գլխավոր հերոսը ոչ թե անձն է՝ քաղաքապետը՝ այլ քաղաքը, Գորիսը, որը հերթական ղեկավարը պետք է ունենա: Ակսել Բակունցի ներկայացրած «...քաղաքի հայր՝քաղաքագլուխ Մաթեւոս բեյից» հետո Գորիսը շատ ղեկավարներ է տեսել: Կարելի է ասել, որ չորս-հինգ տասնամյակի կտրվածքով ծանոթ եմ եղել մեծ մասին ու նրանց գործունեությանը: Նվիրյալ, սկզբունքային, գործարար ղեկավարներ անշուշտ ունեցել է քաղաքը, սակայն Գորիսի համար չեմ կարող առանձնացնել մեծ թռիչքների որեւէ ժամանակահատված: Ու ինձ թվում է, որ քաղաքը ներքին ինչ-որ խռովք ունի ժամանակից, աշխարհից, մարդկանցից...

Ուրիշ քաղաք է Գորիսը. ավանդապաշտ է ու քմահաճ, կարեկցող է ու անզիջում, խոսքաշատ է ու խոսքադաղ... Եվ ինչքան էլ հեռու ես ապրում, ինչքան էլ ժամանակն է քեզ հեռացնում, միեւնույն է, եթե երբեւէ Գորիսը եղել է քո մեջ՝ անթիվ, անհամար թելերով մնում ես կապված այդ կախարդանքին, ու ողջ ապրելածեւդ անցնում է «ընկույզի կճեպի մեջ պարփակված» այդ քաղաքի պրիզմայով:

Այն, ինչ ռուսական լեզվամտածողության մեջ կոչվում է «փոքր հայրենիք», մեզ մոտ ծննդավայրն է, պապական օջախը, հայրական տունը, հայրենի քաղաքն ու գյուղը, որի նկատմամբ սերն ու նվիրումն ամեն մեկիս մեջ մտնում է մայրական կաթի հետ: Ռուս մեծ գրող Մաքսիմ Գորկին այլ կերպ է բնութագրել ծննդավայրի հետ կապը. «Անապատի գեղեցկությունը ոչ թե իրեն՝ անապատի մեջ է, այլ՝ արաբի հոգում»: Հրաշալի պատկեր է:

Մոսկվայում գորիսյան մի փոքրիկ «թաղավորություն» ունենք՝ նախագահով, մշակույթի նախարարով, կայքով, որ հենց այդպես էլ կոչվում է՝«Գորիս 266»: 2-ը դպրոցի անվանումն է, 66-ը՝ ավարտական տարին: Հավաքվում ենք հիշարժան առիթներով, այցելում ենք համերգների, ցուցահանդեսների, տարեկան մեկ-երկու անգամ կոլեկտիվով ճանապարհորդում ենք: Հոգեբանությունը, մտածելակերպը, խոսքն ու զրույցը Գորիսն է ու գորիսյանը: Ամեն ինչ սրտամոտ ու հարազատ է:

Գնացել էինք Տվեր՝ հանդիպելու մեր ուսուցչուհի Տատյանա Նիկոլաեւնա Բոգոմոլովային: Ռեստորանի մեծ դահլիճում ռուսական հարսանիք էր, իսկ փոքրում մենք էինք հավաքվել: Երբ հարսանքավորներն իմացան, որ իրենց հարեւանությամբ հայ աշակերտները 45 տարի հետո եկել, հանդիպում են իրենց ռուսաց լեզվի ուսուցչուհուն, հարսանիքն աստիճաբար տեղափոխվեց մեր դահլիճը: Ալբոմներ էինք տարել, տեսահոլովակ ցուցադրեցինք, Տատյանա Նիկոլաեւնան կարդաց Գորիսին նվիրված իր բանաստեղծությունները... Անմոռանալի երեկո էր:

Գորիսն այստեղ ծնված կամ երբեւէ այստեղ ապրած ամեն մարդու ուրախությունն է, կարոտը, հոգսը, ցավը... Եվ բոլորի համար էլ կարեւոր է, թե ինչով է ապրում ու շնչում իր օրրանը, ինչպես է քայլում աշխարհի մեծ երթի մեջ եւ, վերջապես, ով եւ ինչ նորմերով է ղեկավարում իր քաղաքը:

Գորիսը նոր քաղաքագլուխ պիտի ունենա: Ո՞վ է բյուրեղյա մաքրությամբ ու անսպառ եռանդով, տնտեսական ու քաղաքական պոտենցիալով լի գորերի սերնդի այն արեւորդին, որ ներկա, ոչ այնքան հեշտ պայմաններում պիտի կարողանա նորովի մոտենալ չլուծված խնդիրներին, զարգացման նոր տեմպ հաղորդել տնտեսությանը, փոխել քաղաքի դեմքը, նրան հանել նոր ուղեծիր:

Առաջադրված թեկնածուների անունները կարդացի «Սյունյաց երկիր» թերթի էլեկտրոնային տարբերակում: Պետք է խոստովանեմ, որ քիչ գիտեմ նրանց, եւ սխալ կլինի կարծիք հայտնել կամ համեմատություններ անել: Բայց մի բան անպայման կուզեի ասել տղաներին: Մարտը տարեք ազնիվ ճանապարհով: Աշխատեք չընկղմվել բամբասանքների, ասեկոսեների, ստահոդ հորինվածքների ճահճում, իմացեք ձեր արժեքը եւ բոլոր իրավիճակներում եղեք ավելի բարձր հարթության վրա: Միշտ պետք է մտածել, որ այդ ամենը մեր ողջ կյանքի համար մի ակնթարթ է միայն, որ վաղը մենք նորից պիտի հանդիպենք դեմ հանդիման, պիտի ողջունենք իրար, ու ամեն մեկը նորից իրենից կախված ամեն ինչ պիտի անի հայրենի քաղաքի համար:

Հիմա մի քանի խոսք իմ ճանաչած մարդու մասին: Վաչագան Ադունցին գիտեմ դեռ դպրոցական տարիներից: Իսկ եթե ավելի խորանանք՝ գիտեմ ե՛ւ տոհմը ե՛ւ ընտանիքը: Ադունց տունն այս բնակավայրի հին տոհմերից մեկն է: Հին գորիսեցի Հովսեփ Ադունցի երեք որդին էլ արհեստավոր են եղել ու հավատարմորեն ծառայել իրենց քաղաքին:

Նրանցից ավագը՝ Լեւոնը կռվել է առաջին համաշխարհային պատերազմում, հետո անդամագրվել Անդրանիկի բանակին, մասնակցել Վանի, Սարդարապատի հերոսամարտերին, Զանգեզուրի պաշտպանությանը: Նրա ծառայությունները նշվել են Գեորգիեւյան խաչի երկու շքանշանով: Հենց դրա համար էլ խորհրդային տարիներին բռնադատվել է, դատապարտվել ու ենթարկվել աքսորի ինչպես 1937, այնպես էլ 1949 թվականներին: Վաչագանի պապը՝ Գարեգինը, կամավոր Հայրենական մեծ պատերազմ է մեկնել 42 տարեկանում՝ թողնելով չորս անչափահաս երեխայի, ծառայել է մինչեւ պատերազմի ավարտը: Պարզ, անմիջական, անկեղծ, բարեկամի ու հարեւանի ուրախություններով ապրող արհեստավոր էր նաեւ Վաչագանի հայրը՝ Վանիկը, ում ընտանիքը շատ վաղ կորցրեց: Երեւի հենց դա էր գործոններից մեկը, որ տան ամենափոքրը՝ երեք քույրերի միակ եղբայրը, իր տարիքից ավելի վաղ հասունացավ:

Դպրոցում Վաչագանը լավ էր սովորում, ակտիվորեն մասնակցում էր հասարակական աշխատանքներին: Իսկ բուհո՞ւմ... Քիչ է ասել, թե նա լավ սովորող էր կամ ավարտեց գերազանցության դիպլոմով: Այդ տարիներին Վաչագանը նաեւ բուհական ակտիվի հայտնի դեմքերից էր՝ Երեւանի գյուղատնտեսական ինստիտուտի կոմերիտմիության կոմիտեի անդամ էր, մասնակցում էր հանրապետական եւ միութենական ուսանողական գիտական ֆորումների, մրցույթների, իսկ ամռանը՝ անպայման ուսանողական շինարարական ջոկատի կազմում էր: Միշտ հիացրել է իր աշխատասիրությամբ, պարտաճանաչությամբ, զսպվածությամբ, շրջապատի նկատմամբ ուշադրությամբ, ընտանիքի, հարազատի հանդեպ սիրո ու հոգատարության բարձր զգացումով:

Թեեւ Վաչագան Ադունցի աշխատանքային գործունեության տարիներին հեռվում եմ եղել, այնուամենայնիվ, առիթից առիթ Գորիս այցելելու ընթացքում հետաքրքրվել, իմացել եմ, որ ունի մեծ պատասխանատվություն իրեն հանձնարարված գործի հանդեպ, պահանջկոտ, սրտացավ ու կարեկցող ղեկավար է, վայելում է գործընկերների ու շրջապատի հարգանքը:

Գորիսը կարեւոր ընտրության առաջ է կանգնած: Ես շատ եմ ուզում, որ գորիսեցին ճիշտ կատարի այդ ընտրությունը:

Շատ եմ ուզում, որ Գորիսը գտնի իր իսկական ղեկավարին:

Գորիսի քաղաքապետի մեր թեկնածուն Վաչագան Ադունցն է

ԳԱՌՆԻԿ ՀՈՎՍԵՓՅԱՆ
Երկարամյա մանկավարժ, կենսաթոշակառու

Մեր օրերում բյուրոկրատիզմը շատ պաշտոնյաների վրա բացասական ազդեցություն է թողել, ինչը չեմ կարող ասել Գորիսի քաղաքապետի թեկնածու Վաչագան Ադունցի մասին: Վերջինիս հետ առնչվել եմ գործի բերումով եւ հիացել եմ նրա սիրալիր վերաբերմունքով: Նա այն եզակի պաշտոնյաներից է, որի՝ ինչ-որ հարցում մերժելու դեպքում անգամ աշխատասենյակից գոհ եմ դուրս եկել: Որպես կենսաթոշակառու՝ Վաչագան Ադունցից ակնկալում եմ ուշադրություն եւ հարգալից վերաբերմունք հատկապես կենսաթոշակառուների նկատմամբ: Հաշվի առնելով այն ճշմարտությունը, որ պետությունը ժողովրդով է պետություն՝ յուրաքանչյուր ղեկավար պետք է թիկունք լինի նախ եւ առաջ իր ժողովրդին: Վաչագան Ադունցին տալով իմ վստահության քվեն՝ համոզված եմ, որ մենք շատ կարճ ժամանակում կքաղենք քաղաքի բարեկեցիկ կյանքի պտուղները:

ԳՐԻՇԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Գորիսի պետական համալսարանի դասախոս

Ես այն կարծիքին եմ, որ կյանքի բոլոր իրավիճակներում էլ սերնդափոխությունը բնական ճանապարհ է, իշխանափոխությունը՝ օրինաչափ երեւույթ: 15 տարուց ավելի է՝ ճանաչում եմ Վաչագան Ադունցին: Ամենակարեւորն այն է, որ ի դեմ Ադունցի՝ կունենանք ինտելեկտուալ քաղաքապետ: Գորիսն ավանդապաշտ եւ հարուստ մշակույթ ունեցող քաղաք է, որ պետք է պահպանել: Գորիսի առջեւ կանգնած տնտեսական, սոցիալական, հասարակական խնդիրների լուծումը ես տեսնում եմ Վաչագան Ադունցի ներուժի մեջ: Թեպետ պետք է նշեմ, որ խնդիրը չի լուծվում, այլ միայն դրանց լուծման համար ճանապարհ են հարթում, որ աստիճանաբար, սերնդեսերունդ պիտի շարունակվի ու արդյունք տա:

Որպես ՀՀԿ անդամ՝ կարող եմ նշել, որ կուսակցությունը Վաչագան Ադունցի թեկնածությունն ինքնանպատակ չի առաջադրել: Նա հարգարժան մարդ է եւ դա ապացուցել է իր գործունեության ողջ ընթացքում: Համոզված եմ՝ արդարամիտ ու ազնիվ թեկնածուն Գորիսի քաղաքապետ ընտրվելու դեպքում քաղաքի կառավարման ընթացքում կունենա իր վճռորոշ ձայնը:

ԷԴԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ
Գորիսի N5 հիմնական դպրոցի տնօրեն

Վաչագան Ադունցին ճանաչում եմ նրա դպրոցական տարիներից: Ուսումնառության տարիներին Ադունցն աչքի է ընկել գերազանց առաջադիմությամբ, կարգապահությամբ ու օրինակելի պահվածքով: Դպրոցին զուգահեռ գերազանց առաջադիմությամբ ավարտել է նաեւ ԵՊՀ-ին կից ֆիզիկամաթեմատիկական դպրոցը՝ հեռակա ուսուցմամբ, որից հետո ընդունվել է Երեւանի գյուղատնտեսական ինստիտուտի՝ այն ժամանակվա համար ամենադժվար բաժիններից մեկը՝ այստեղ նույնպես ունենալով գերազանց առաջադիմություն: Արդեն մի քանի տարի է՝ մեր դպրոցի կառավարման խորհրդի նախագահն է, եւ դպրոցի բարեկարգման համար համատեղ կատարել ենք որոշակի աշխատանքներ:

Ակնկալիքներ եւ սպասումներ շատ ունենք ապագա քաղաքապետից: Հուսով եմ՝ նոր քաղաքապետի աշխատանքային ծրագրի առաջնային հարցերից կլինեն Գորիսի Ավանգարդ թաղամասի ասֆալտապատումն ու բարեկարգումը: Վաչագան Ադունցն արժանի թեկնածու է ու, ամենակարեւորը, կարող ուժ՝ քաղաքի առջեւ ծառացած խնդիրները լուծելու համար:

ՄԱԴՈՐԱ ՍԵՎԼԻԿՅԱՆ
ՀՀԿ Գորիսի կանանց խորհրդի նախագահ, Գորիսի Ա.Սաթյանի անվան երաժշտական դպրոցի տնօրեն

ՀՀԿ-ն այս անգամ Գորիսի քաղաքապետի թեկնածու է առաջադրել Վաչագան Ադունցին՝ հաշվի առնելով նրա պատրաստակամությունն ու նվիրվածությունը կուսակցության առաջադրած խնդիրներին ու ծրագրային նպատակներին եւ, ամենակարեւորը, նրա մարդկային կերպարը: Ադունցին ճանաչում եմ մանուկ հասակից՝ որպես օրինակելի ու գերազանց առաջադիմությամբ աշակերտ: Հետագայում աշխատելով տարբեր հիմնարկ-ձեռնարկությունների ղեկավար պաշտոններում՝ մեր նախընտրած թեկնածուն առանձնացել է մարդկանց հանդեպ իր հարգալից վերաբերմունքով, համբերատարությամբ ու անբասիր վարքով:

Օրինակելի զավակ է ու ամուսին, սիրված հայր: Համոզված եմ՝ նրա շրջահայացությունը, ուղղամտությունը, անաչառությունն ու սկզբունքայնությունը հնարավորություն կտան լուծել քաղաքի շատ խնդիրներ, աշխատանքային բնագավառում շերտավորում չառաջացնել եւ թույլ չտալ լուրջ թերացումներ: Վաչագան Ադունցը՝ որպես մարդ եւ ղեկավար, ամեն հնարավորը կանի քաղաքը պատշաճ մակարդակի հասցնելու համար: Գորիսի համար նա արժանի թեկնածու է, եւ հուսով եմ, ժողովուրդը նրան կտա իր վստահության քվեն:

ԳՈՌ ՇԵԳՈՒՆՑ
Գորիսի բժշկական կենտրոնի վիրաբուժական բաժանմունքի վարիչ

Որպես քաղաքացի, որպես ընտանիքի ամուսին եւ հայր՝ Վաչագան Ադունցը կարող է օրինակ լինել շատերի համար: Մշտապես նրա մասին ունեցել եմ դրական կարծիք եւ իմ վստահության քվեն կտամ նրան: Իր պարկեշտության ու արդարամտության շնորհիվ նա վայելում է շատերի հարգանքը: Ակնկալում եմ, որ Ադունցի՝ քաղաքապետ ընտրվելու դեպքում քաղաքապետարան-հիվանդանոց կապն ավելի ամուր հիմքերի վրա կդրվի: Լինելով հասարակական վայր՝ հիվանդանոցը միշտ էլ ունենում է խնդիրներ, որոնք հնարավոր է լուծել միասնաբար: Համոզված եմ՝ ընտանիքի նկատմամբ պարկեշտ ու բարոյական վարք ունեցող մարդը հասարակության հանդեպ կունենա նույնպիսի վերաբերմունք:

Ուղերձ Կրասնոդարի երկրամասից

ՌԱՋՄԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ
Համայնքի նախագահ

Հարգելի խմբագրություն

Կրասնոդարի երկրամասում բնակվում են բազմաթիվ գորիսեցիներ, ովքեր շատ ակտիվ գործունեություն են ծավալել ի նպաստ երկրամասի հայ համայնքի, չմոռանալով նաեւ հետեւել հայրենի քաղաքի առօրյային: Իմանալով, որ Գորիսում պետք է տեղի ունենա քաղաքապետի ընտրություն, նրանք դիմեցին մեզ՝ խնդրանք-պահանջով, որպեսզի մենք փոխանցենք Սյունիքի մարզի բնակիչներին ու գորիսեցիներին՝ հատկապես, մեր ջերմ մաղթանքները եւ, ձեր թույլտվությամբ, բարի նախանձն առ այն, որ մեր հայրենիքի համար ծանր տնտեսական եւ քաղաքական իրավիճակում նրանք ունեն հնարավորություն՝ ընտրելու այնպիսի քաղաքապետ, որպիսին Վաչագան Վանիկի Ադունցն է՝ ազնիվ, սկզբունքային եւ արդար հայորդին:

Կրասնոդարի երկրամասի հայ համայնքը մաղթում է հաջողություն եւ բարգավաճում Գորիսին, Սյունիքի մարզին եւ Հայաստանին՝ ընդհանրապես, ու հայտնում իր պատրաստակամությունը՝ ցուցաբերելու բազմակողմանի աջակցություն Վաչագան Վանիկի Ադունցին՝ իր բռնած գործում:

Ուսանողության նախընտրած թեկնածուն

Մենք նախընտրում ենք մեր վստահության քվեն տալ Գորիսի քաղաքապետի թեկնածու Վաչագան Ադունցին, քանի որ նրա մեջ տեսնում ենք այն եռուժը, որ կարող է հետագայում երիտասարդությանը մեծ նպաստ բերել: Ունենալով բարձր մակարդակ, գիտելիքների հարուստ պաշար եւ կազմակերպչական ջիղ՝ նա կկարողանա լուծել քաղաքի համար արդիական մի շարք հարցեր՝ քաղաքի լուսավորության բարելավում եւ մայթերի բարեկարգում, ժամանցի կենտրոնների ստեղծում, ներքաղաքային կանոնավոր ուղեւորափոխադրումների բարելավում եւ այլն: Վաչագան Ադունցի կազմակերպչական ջիղը հնարավորություն կտա իրականացնել միջոցառումներ, աշխուժացնել երիտասարդների հասարակական կյանքը:

ԳՊՀ բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի կենսաբանության բաժնի 2-րդ կուրսի ուսանողներ

Սյունյաց երկիր
Գլխավոր խմբագիր՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռախոս՝ (0285) 5 25 63, (091) 45 90 47, (077) 06 28 02:
Էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
Ինտերնետ՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել:
Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):
«ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:
Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:

® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:
Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 2300, գինը՝ 200 դրամ:
Ստորագրված է տպագրության 30.05.2014թ.: